

ԶՐՈՒՅՑՆԵՐԸ ԱՏ. ՕՐԲԵԼՅԱՆԻ  
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ՍԻՍԱԿԱՆ» ԵՐԿՈՒՄ

ՆԱԻՐԱ ԹԱՄԱՄՅԱՆ

Հայ միջնադարյան մատենագրության նշանավոր դեմքերից մեկը՝ Ստ. Օրբելյանը (XIII դ. երկրորդ կես–1303 թ.), պատմագրական, գեղարվեստական, աստվածաբանական գործերի հեղինակ է: Նրա «Պատմութիւն տանն Սիսական» երկը, որպէս միջնադարյան պատմագրություն տիպիկ օրինակ, պատմագիտական կարևոր արժեքից բացի, ունի նաև գեղարվեստական մեծ արժանիքներ<sup>1</sup>: Այս ծավալուն գործում դրանցից մեկը գրական համեմատաբար փոքրածավալ ժանրերի բազմազանությունն է (վարք, վկայաբանություն, գրույց, տեսիլ, թուղթ՝ արձակ ու չափածո և այլն): Ստ. Օրբելյանը կրողն ու շարունակողն է Ե դարի մատենագրական ավանդույթների, որոնք թեև ժանանակի ընթացքում կրել են մասնակի փոփոխություններ, սակայն չեն ազդել ժանրային օրինաչափությունների վրա: Իր Պատմությունը գրելիս որպէս օրինակ ունեցել է հենց այս դարի, ապա դրան հաջորդող պատմագրական կոթողները:

Զրույցները հայ իրականության մեջ հայտնի են շատ վաղուց: Դրանք դարձել են հանգամանալից քննության առարկա<sup>2</sup>:

Ստ. Օրբելյանը նշում է, որ «Պատմութիւն տանն Սիսական» երկում գործածելու է գրույցներ (թեև դրանք մեծապէս տարբերվում են մեր այսօրվա ընկալածներից). «... ուղղեցից զընթացս բանիս ի վերայ անյայտ շաւղաց անկոխ ռահիս՝ սկիզբն առնելով համառօտիւք հին և նոր զրուցաց յոգնատեղեակ վիպագրութեանս, որոյ աւարտն և նաւահանգիստն յանձն է քաջ և անմոլար նաւապետին» (ընդգծումը մերն է – Ն. Թ.)<sup>3</sup>: Զրույց ասելով նա հասկանում է պատմություն և, որպէս ճշմարիտ գիտնական, տեղ է տալիս միայն իր համոզմամբ, հավաստի աղբյուրին՝ գտելով ունեցած տեղեկությունները. «Փափագելի է մեզ այժմ թողուլ զամենայն սնտոխապաշտական վէպս հնոցն» (էջ 8): Նույն գործի հիշատակարանում գրում է. «... զհետ մտեալ ամենայն ճշդիւ ստուգութեան ի բաց ձգեալ և զունայնա-

<sup>1</sup> Պատմագրական երկերում հանդես եկող պատմականության, գիտականության և գեղարվեստականության միասնականության մասին առավել մանրամասն տե՛ս Մ. Ա. Բ. Ե. յ ա ն. Երկեր, հ. 9, Երևան, 1968, էջ 170, 314-315 և այլն, Հայ միջնադարյան գրականության ժանրեր, Երևան, 1984, էջ 7-37:

<sup>2</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Ս. Բ. Ե. յ ա ն. Հայ միջնադարյան գրույցներ, Երևան, 1969, էջ 5-221, և ու յ ն ի՝ Առակ և գրույց. – Հայ միջնադարյան գրականության ժանրեր, Երևան, 1984, էջ 301-349, նաև՝ Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, խմբագրությամբ և առաջաբանով Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1957, էջ XII-XV և այլն:

<sup>3</sup> Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 4-5: Այսուհետև էջը կնշվի մեջբերմանը կից:

խոյզ գրաբանություն, զի մի՛ տաղտկասցին լսողք՝ կարճաբան վիպասանութեամբ ցուցաբ համառօտիւ զատաւել և զճահագոյնն» (էջ 368): Նրա համար պատմություններ գրույց է, բայց միայն բանավոր ավանդվածը, իսկ գրավոր աղբյուրների հաղորդածն այդպիսին չէ, թեպետ երկու դեպքում դրանց ստուգությունն ընդունվում է: Մասնավորապէս՝ Ջալալեդդինի պատմությունն անվանում է գրույց. «Բայց պատմեցից ձեր աստանօր զրոյցս զարհուրեցուցիչս. զի նախ քան զայս հալածական եղեալ ի Թաթարէն սուլտանն Խորազմաց Ջալալադդինն՝ որդի Խորազմ շահին՝ գայ ընդ Պարսկաստան և անցեալ ընդ Ատրպատական՝ մտանէ յաշխարհս Հայոց. յոր տեղ և հասանէր՝ աւերէր, գերփէր, ապականէր ոչ խնայելով ի մարդ և կամ յանասուն» (ընդգծումը մերն է – Ն. Թ., էջ 292):

Պատմության յոթ գլուխների վերնագրերում կա գրույց բառը, որը գործածվում է հետևյալ ձևակերպումներով՝ «գրոյցք պիտանիք» (զլ. Դ), «գրոյցք հին ժամանակաց» (զլ. Ե), «յեստ բագում ժամանակաց գրոյցք» (զլ. ԺԱ), «որ ինչ գրոյց եղեն յաւուրս նոցա» (զլ. ԻԴ), «գրոյցք յուրվք և պիտանիք» (զլ. ԻԵ), «համառօտ գրոյցք» (զլ. ԾԴ), «գրոյցք յուրվք» (զլ. ԿԵ): Այստեղ հարկ է նշել հետևյալ հանգամանքը. գրույցք, բացի ժանրային դրևորումից, ունի նաև մեթոդական կիրառություն<sup>4</sup>. վերոնշյալ գլուխներից մի մասում երևոյթը հանդես է գալիս հենց վերջին ձևով: Որպես ասվածի ապացույց, բերենք մի օրինակ. Բարդուղիմեոս առաքյալի և նրա աշակերտների կողմից Հայաստանում, մասնավորապէս Սյունիքում քրիստոնեության տարածման պատմությունը Օրբելյանը կոչում է «գրույցներ» (զլ. Ե՝ «Զրոյցք հին ժամանակաց որ վասն գալոյ սուրբ առաքելոյն Բարդուղիմեոսի յաշխարհս Սիւնեաց ի գաւառն Գողթան, և դարձուցանել ի հաւատս զմանս, հաստատել սեղան և ձեռնադրել եպիսկոպոս»), սակայն դրանք գրույցներ չեն որպես այդպիսիք: Այս գլխում հեղինակը հաջորդաբար ներկայացնում է իրադարձություններ, որոնց թիվը, եթե հետևելու լինենք իր իսկ ասած վերնագրային բանաձևումին, պիտի լինի առնվազն տասը-տասներկու: Ստացվում է, որ վերնագիրը ոչ միշտ է ժանրային պատկանելության ցուցիչ. այս դեպքում պատմիչը հմտորեն կարողացել է օգտագործել գրույցի մեթոդը, իսկ ժանրի մասին խոսք լինել չի կարող: Նման օրինակ է նաև Դ գլխում արված պատմությունը (զլ. Դ՝ «Մակս լուսաւորութեան աշխարհիս այսմիկ աստուածագիտութեամբ և հաւատալոյ իշխանացն ընդ Տրդատայ ի ձեռն սուրբ լուսաւորչին մերոյ Գրիգորի ի Քրիստոս Աստուած, և աւերելոյ զմեհեանսն և շինելոյ եկեղեցիս, և ձեռնադրութիւն եպիսկոպոսին Սիւնեաց, և այլ գրոյցք պիտանիք»)<sup>5</sup>:

Ստ. Օրբելյանի Պատմության մեջ տեղ են գտել բազմաթիվ գրույցները, որոնք պատմելիս երբեմն ցուցաբերում է անհատական, փիլիսոփայական մոտեցում թե՛

<sup>4</sup> Զրույցի՝ որպես մեթոդի մասին մանրամասն տե՛ս В. В. Виноградов. О языке художественной прозы. Избранные труды. М., 1980, с. 49.

<sup>5</sup> Այստեղ պատմիչը խստորեն չի հետևել ժամանակագրական կարգին, քանի որ այս՝ Դ գլխում տալիս է Գրիգոր Լուսավորչի կողմից Սյունիքում քրիստոնեության տարածման, ապա նոր Բարդուղիմեոսի Հայաստան՝ մասնավորապէս Գողթն գալու պատմությունը: Ստ. Օրբելյանը, թերևս, այսպէս է վարվել՝ դեկավարվելով կարևորության սկզբունքով, առաջնությունը տալով, իր կարծիքով, գլխավոր իրադարձությանը:

գրույցներին, թե՛ նկարագրվող այլ իրադարձություններին, ինչը նոր որակ է տալիս ողջ Պատմությանն ընդհանրապես:

Ջրույցները կարելի է բաժանել հոգևոր և աշխարհիկ տեսակների, ինչպես ընդունված է առհասարակ: Աշխարհիկ գրույցներից, որոնք լինում են պատմական և կենցաղային, Ստ. Օրբելյանի Պատմության մեջ առավել ուշագրավ են առաջին ենթատեսակին պատկանողները: Սրանցից է Անդոկ և Բաբիկ իշխանների մասին պատմական գրույցը, որը վերաբերում է «Պարսից պատերազմ» վիպաշարի<sup>6</sup>: Այս առիթով Ս. Հարությունյանը նկատում է. «Պարսից պատերազմ» վեպն ավարտվում է V դարի սկզբների պատմական իրադարձություններին վերաբերող վիպական դրվագներով: Սակայն այդ վեպը ժողովրդի հիշողության մեջ երկար պահպանվել է և ենթարկվել հետագա դարերի պատմական ազդեցությանը<sup>7</sup>: Պատմության մեջ այս գրույցին հատկացված է երեք գլուխ, որոնք «Հայապատում» երկում մեջբերել է Ղ. Ալիշանը՝ համապատասխան ծանոթագրություններով<sup>8</sup>: Սա գրավոր աղբյուր ունեցողներից է: Որպես գիտնական պատմիչ՝ Օրբելյանը հետևողական է իր գործածած աղբյուրները նշելու հարցում. «Ապա հանդես արարեալ ամենայն պատմագրաց Հայոց, և զոր գտաք՝ հավաքեցաք ի նոցանէ ամենայն ճշդիւ, նաև սակաւ ինչ ի Պետրոսի Սինեաց եպիսկոպոսի<sup>9</sup> ճառիցն, որ վասն Բաբկայ՝ Սինեաց տեառն» (էջ 5): Նույն գրույցը գտնում ենք նաև Մովսէս Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում, սակայն փոքրինչ համառոտ<sup>10</sup>. նա ևս նյութը քաղել է Պետրոս Քերթոզի ներբողական ճառից. «Այս գեղեցիկ գրույցը քերթողաբար մշակել է Սյունյաց եպիսկոպոս Պետրոսը... Երևում է, որ գրույցի պատմվածքի ընթացքը նույն ժողովրդականն է պահված, մշակումը կատարվել է գլխավորապես արտահայտության ձևերի նկատմամբ»<sup>11</sup>: Այստեղ առկա պատմական իրողությունների մասին խոսում է Փավստոս Բուզանդը, թեպետ Սյունիքի ավերման պատճառն այլ է համարում. «Եւ առնէր զայս ամենայն վասն վրիժուցն Անդուկայ, որ եղև պատերազմ ընդ Ներսէհ արքայ Պար-

<sup>6</sup> Տե՛ս Մ. Ա. Բ. Ե. Ղ. Յ. Ա. Երկեր, հ. Գ, էջ 443-447: Այս գրույցի մասին խոսում է նաև Պատմության ֆրանսերեն թարգմանիչ Մարի Բրոսեն. տե՛ս Ա. Դ. Ն. Ղ. Յ. Ա. Երկեր, հ. Գ, էջ 27:

<sup>7</sup> Ս. Հ. Բ. Ե. Ղ. Յ. Ա. Երկեր, հ. Գ, էջ 159: Անդոկի և Բաբիկի գրույցը Հարությունյանը շարադրել է ըստ Մ. Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» և Ստ. Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» երկերի (տե՛ս նույն տեղում):

<sup>8</sup> Հայապատում. պատմիչք և պատմութիւն Հայոց, յօրինեալ և հաւաքեալ ի հ. Ղևոնդեայ վ. մ. Ալիշան (այսուհետև՝ Հայապատում), Վենետիկ, 1901, Բ, էջ 115-117, 118-123: Ալիշանը և՛ այս, և՛ իր մյուս աշխատություններում մեծ տեղ է հատկացնում Պատմության մեջ եղած գրույցներին ու տարբեր առիթներով անդրադառնում դրանց:

<sup>9</sup> Խոսքը մատենագիր, թարգմանիչ, մեկնիչ Պետրոս Սինեացու կամ Քերթոզի (մահ. մոտ 558) մասին է. ցավոք, այս ճառը կամ ներբողը չի պահպանվել:

<sup>10</sup> Մ. Ն. Վ. Ե. Ա. Երկեր, հ. Գ, էջ 115-117, 118-123: Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ Վ. Ա. Երկեր, հ. Գ, էջ 115-117, 118-123), քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Երևան, 1-983, էջ 106-112:

<sup>11</sup> Մ. Ա. Բ. Ե. Ղ. Յ. Ա. Երկեր, հ. Գ, էջ 447:

սից»<sup>12</sup>: Այս պատմությունները բանավոր շրջանառության մեջ են եղել Սյունիքում և ժամանակ անց գրավել:

Ստ. Օրբելյանի և Մովսես Կաղանկատվացու գործերում առկա որոշ տարբերություններն ունեն հեղինակային մոտեցմամբ պայմանավորված բացատրություն. Սյունյաց տան պատմիչն առավել մանրամասն է ներկայացնում դեպքերի ընթացքը՝ գեղարվեստական պատկերավոր նկարագրություններով: Մովսես Կաղանկատվացին զուտ շարադրական մոտեցում է ցուցաբերում խնդրին, և գրույցը համարում ժողովրդական. «Գտանին գրոյցք Արնելից կողման, որ ոչ են անկեալ ի գիրս հնագիր պատմագրաց, գոր պատշաճ վարկաք մակագրեալ ի տառս տաղաչափութեան մերում»<sup>13</sup>: Մինչդեռ Ստ. Օրբելյանը (որն ավելի ուշ ժամանակի հեղինակ է) մի քանի անգամ հիշատակում է այս գրույցի գրավոր աղբյուրը, ի տարբերություն Կաղանկատվացու, որը բանավոր գրույց էր համարում: Սյունյաց պատմիչը հանդիսավորությամբ է սկսում իր պատմությունը Անդոկի իշխանի մասին՝ նախապես, որպես գիտնական պատմիչ, պատկերավոր ու ճոխ լեզվով ակնարկ կատարելով Հայաստանի քաղաքական դրության վերաբերյալ. այն համարում է Ներսես Պարթև կաթողիկոսի մարգարեության մեջ տեղ գտած անեծքի<sup>14</sup> իրականացում: Նա հատուկ շեշտում է Անդոկի՝ Հայոց Արշակ թագավորի աներհայր լինելու փաստը: Երկու պատմիչներն էլ Սյունյաց տիրոջ կատարած քայլը (Շապուհի արքունիքը թալանելը) որակում են դավաճանություն, անընդունելի են համարում նաև խնջույքի ընթացքում նրա պահվածքը՝ «հպարտութեամբ խրոխտացեալ» (ընդգծումը մերն է – Ն. Թ., էջ 21), «Եւ նա (Անդոկը – Ն. Թ.) հպարտացեալ ոչ ինչ ճաշակեաց և զգացուցեալ թագաւորին, վասն այնր ոչ ինչ փոյթ լինէր նմա» (ընդգծումը մերն է – Ն. Թ.)<sup>15</sup>: Այստեղ Անդոկը դրսևորում է քրիստոնյային ոչ վայել արարք. նախ, թույլ է տալիս, որ հպարտությունը գլուխ բարձրացնի, ինչը ընդունված մահացու յոթ մեղքերից է<sup>16</sup>, ապա նաև չի ենթարկվում իր մարմնավոր տիրոջը, քանի որ, ինչպես Ստ. Օրբելյանն է շեշտում, Սյունիքը Պարսից թագավորի գերիշխանության ներքո էր: Սրանք փաստեր են, որոնց նկատմամբ անտարբեր չէին կարող մնալ պատմիչները:

Անդոկի և Բարիկի մասին գրույցն ունի սյուժետային մի քանի գիծ, որոնք թեն միմյանց շարունակություն են, սակայն կարող են հանդես գալ նաև որպես լրիվ անկախ ստեղծագործություններ: Այստեղ կա գողտրիկ մի դրվագ եղջերուի միջոցով Շաղատի եկեղեցու հայտնվելու մասին: Եթե Մովսես Կաղանկատվացին (որի Պատմության մեջ ևս կա այս գրույցը) գյուղի, ինչպես ինքն է կոչում, հիմնադրումից անմիջապես հետո Շաղատի եկեղեցու հայտնաբերման պատմությունն է անում, ապա Ստ. Օրբելյանը մինչև այդ հարկ է համարում նշել թվականը («Ի վաթսներորդ ութերորդ ամի Շապհոյ՝ Պարսից արքայի՝ որդոյ Ռրմզդի, և յերկ-

<sup>12</sup> Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց ի չորս դայրութիւնս, Վենետիկ, 1832, էջ 177:

<sup>13</sup> Կ ա ղ ա ն կ ա տ վ ա յ ի, էջ 106:

<sup>14</sup> Տե՛ս Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց հայրապետի. – Սովերք հայկականք, հ. 2, Վենետիկ, 1853, էջ 89-104:

<sup>15</sup> Կ ա ղ ա ն կ ա տ վ ա յ ի, էջ 107:

<sup>16</sup> Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 719:

որդ ամին՝ Խոսրովու՝ Հայոց թագաւորի, Բաբիկ Միւնեաց տէր լինի և ի նմանէ առնու գտէրութիւն: Եւ Հոռոմի թուական 124 լինէր, զոր ստոյգ գիտացաք, և 138 ամօք յառաջ էր քան զթուական Հայոց», (այսինքն՝ ընդհանուր 413 թ. – Ն. Թ., էջ 27)<sup>17</sup>:

Մյունյաց պատմիչն առանձնահատուկ համակրանք ունի Բաբիկ Մյունու նկատմամբ. վերադարձը հայրենիք մեկնաբանում է հետևյալ կերպ՝ թե «չիք ումեք քաղցրագոյն քան զծնողս և ոչ քան զգաւառոս իւր» (էջ 25): Ընդհանրապէս նա իր հերոսների քայլերը ներկայացնում է պատճառաբանված, երբեմն էլ փորձում է արդարացման ուղիներ գտնել նրանց ոչ ճիշտ քայլերի համար<sup>18</sup>: Բաբիկ Մյունին ամեն ինչ անում է իր հայրենական տիրույթները վերադարձնելու համար, և ահա դրա համար հրաշալի առիթ է ստեղծվում. Հոնաց աշխարհից Հոնագուրը (կամ Հոնանգուրը), որը հարձակվել էր Պարսկաստանի վրա և ավերում էր, առաջարկում է Շապուհին մենամարտել, որպէսզի ուրիշ արյուն չհեղվի<sup>19</sup>: Շապուհի փոխարեն մարտահրավերն ընդունում է Բաբիկը և հաղթում: Երկու պատմագիրներն էլ գրեթե նույնությամբ նկարագրում են թե՛ Հոնագուրի, թե՛ Բաբիկի սպառազինությունը, ապա մենամարտը, որ տևում է «յառաւօտէ մինչև ցիւն ժամն» (էջ 26): Հատկանշական է, որ մենամարտից առաջ Բաբիկը, ապավինելով վերին օգնությանը, ասում է. «Եկեղեցիք Միւնեաց, օգնեցէ՛ք ինձ»<sup>20</sup>: Հաղթանակից հետո, երբ պարզ է դառնում Բաբիկի՝ Անդոկ իշխանի որդի ու Մյունյաց նահանգի օրինական ժառանգորդ լինելը, Շապուհը զարմանում է, բայց քանի որ խոսք էր տվել նախապէս, թե կատարելու էր խնդրանքը, «աւանդէ նմա նախագահ լինել ընդ Բագրատունոյ, և ընդ Սամիկոնէի համապատիւ եղանիլ (իմա՛ Բաբիկին – Ն. Թ.):

Անդոկի և Բաբիկի մասին գրույցին Ստ. Օրբելյանը սահուն կցում է Շաղատի վանահայր Տիրոտի մասին մի քանի գրույց՝ հոգևորի շարքին դասվող, որոնց կանդրադատանք ստորև:

<sup>17</sup> Պատմիչի նշած թվականներն իրար չեն համընկնում. տե՛ս Ստ. Օրբելյան. Մյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 425, ծնթ. 136:

<sup>18</sup> Վասակ Մյունու վարքագիծը որպէս դավաճանություն ընդունելով հանդերձ՝ ներկայացնում է դրդապատճառները. «... մի՛ զի բոց ծնողութեանն ջեռոյց զփորոտիս նորա վասն որդւոցն որ կային անդ ի պատանդի և խելացնորեալ ամիշեցուցին զնա. մի՛ երկիւղ թշնամոյն Վարագ Վաղանայ, որ կայր առ արքայի և սպասէր Վասակայ մահուն և մի՛ զի գրկումն մեծ և երևելի փառացն և հայրենի տէրութեանն: Յայց երից անհնարին տարակուսանաց տագնապեալ խուճապէր միշտ և ոչ ունէր քուն ի գիշերի կամ հանգիստ ի տունջեան» (էջ 43):

<sup>19</sup> Այստեղ գործում է նույն սխեման, ինչ Տրդատի և գոթաց թագավորի մենամարտում. այս դեպքում Հոնաց թագավորի փոխարեն Հայոց ապագա արքա Տրդատն է կոչվում և հաղթում թշնամու առաջնորդին: Տե՛ս Ագաթանգեղայ պատմություն, Վենետիկ, 1862, էջ 44–48, Մոսկու էս Խոսրով և Գի. Պատմություն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի և Մ. Յարութիւնեանի (նմանահանություն, լրացումները Մ. Սարգսյանի), Երևան, 1991, էջ 220, նաև՝ Մ. Հարությունյան. Հայ հին վիպաշխարհը, էջ 83–84:

<sup>20</sup> Գաղատիկայի Մատթ. 23: 110: Բաբիկի այս խոսքերը չկան Ստ. Օրբելյանի Պատմության մէջ: Ռազմիկների դիմումային խոսքը, ուղղված քրիստոնեական սրբություններին, ժողովրդական ակունքներ ունի. նույն կերպ և հայ միջնադարյան էպոսներից մեկի «Տարոնի պատերազմ»-ի հերոսները օգնություն էին հայցում Մ. Գարապետ եկեղեցուց: Տե՛ս Մ. Աբեղեյան. Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 318–322:

Պատմական հաջորդ խոշոր գրույցը Օրբեյան տոհմի նահապետներից մեկի՝ Լիպարիտի մասին պատմողն է<sup>21</sup>: Լիպարիտ գորավարի մասին հիշատակում են հատկապես Արիստակես Լաստիվերցին և Մատթեոս Ուռհայեցին, Վարդան Բարձրբերդցին<sup>22</sup>: Ստ. Օրբեյանը ցավով նշում է, որ շատ է փնտրել վրաց Օրբեյանների բոլոր երևելի գործերի մասին տեղեկություններ, սակայն չի գտել «Քարթլիս ցխովրեբա»<sup>23</sup> կոչվող մատյանում և սակավ հիշատակություններ է գտել հայ հեղինակների մոտ, իսկ տոհմի վախճանի մասին կարդացել է Մխիթար Անեցու Պատմության<sup>24</sup> մեջ (էջ 273): Ժողովրդական գրույց կա նաև Կիլիկիայի վերջին թագավորների օրոք գործող Լիպարիտ մարաջախտի (ապա և նրա քրոջ) մասին<sup>25</sup>: Այս երկու Լիպարիտների գործունեություններում առկա են ակնհայտ նմանություններ, թեպետ առաջինն ավելի վաղ է գործել՝ XI դարում, իսկ երկրորդը՝ XIV: Լիպարիտ անունը հայ գրականության մեջ հայտնի է նաև Հովհաննես Թղկուրանցու «Տաղ ի Լիպարիտն քաջ» քերթվածից, որն իր աշխատությունում մեջբերում է Ղևոնդ Ալիշանը՝ համապատասխան ծանոթագրություններով: Դրանցից մեկում գրում է. «Օրբեյան ցեղին հատուկ է անունս. ի նչպէս այս Կիլիկիոյ կողմեր եկեր է դա, անձանօթ է. բայց վաղուց եկած է և թերևս ծնած է այս կողմս, վասն զի իր հայրն Թորոս, հօրեղբայրն Օշին և իր մեծ եղբայրն Վասիլ, որք յիշուին ի պատմ-

<sup>21</sup> Ս. Երեմյանը, հենվելով հիմնականում վրաց աղբյուրների վրա, առաջ է քաշել Լիպարիտի Օրբեյան չլինելու, այլ Լիպարիտյանների տոհմի սկզբնավորողներից լինելու մասին վարկածը. տե՛ս Ս. Ս. Երեմյան. Լիպարիտ գորավարը և նրա նախորդները. - Ն. Մատի անվան կաթինետի աշխատություններ, Երևան, № 2, 1947, էջ 103-149: «Հայոց և վրաց տվյալների մանրագին քննությունը ցույց է տալիս, որ մենք գործ ունենք բոլորովին առանձին տոհմի հետ, որի կալվածները հետագայում դառնում են Օրբեյի-Օրբեյան տան ժառանգական սեփականությունը» (նույն տեղում, էջ 105): Խնդրի մասին տե՛ս Ա. Սրապյան. Հայ միջնադարյան գրույցներ, էջ 92-100:

<sup>22</sup> Պատմություն Արիստակիսի Լաստիվերցույ, աշխատութեամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 80-82, Մատթեոս Ուռհայեցի. Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 107-109, Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ, Ի Վենետիկ, 1862, ԾԵ, էջ 99-100: Հպանցիկ հիշատակումներ ունեն Սամուել Անեցին (Սամուելի քահանայի Անեցույ Հաւաքումնք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով և ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893, էջ 105), Սմբատ պատմիչը (Սմբատայ Սպարապետի՝ եղբօր Հեթմոյ Առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպոլիս և Հայոց Մեծաց՝ ըստ կարգի ժամանակաց, Մոսկուա, 1858, էջ 50) և այլն:

<sup>23</sup> Քարթլիս ցխովրեբայի կամ Վրաց պատմության վրացերեն բնագիրը և հին հայերեն թարգմանությունը ուսումնասիրությամբ և բարգրքով լույս ընծայեց Բլիս Աբուլաձեն, Թբիլիսի, 1953, էջ 225, 226 և հուն:

<sup>24</sup> Մխիթար Անեցու (XII դ.) պատմական երկից պահպանվել է միայն առաջին պրակը. տե՛ս Մխիթարայ Անեցույ Պատմութիւն. սկիզբն (գլուխք ԲԷ) և յաւելուածք, ի լոյս ած Ք. Պատկանեան], Ս. Պետերբուրգ, 1879, նաև Մխիթար Անեցի. Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, Երևան, 1983:

<sup>25</sup> Զրույցի բնագիրը տե՛ս Ա. Սրապյան. Հայ միջնադարյան գրույցներ, էջ 238-240, Հովհաննես Թղկուրանցի. Տաղեր, աշխատասիրությամբ Էմ. Պիվազյանի, Երևան, 1960, էջ 271-274:

չէն Կիլիկեցոց՝ ամենքն այլ մարաջախտ էին, այսինքն զօրապետք»<sup>26</sup>: Նույնը կրկնում է նաև իր մյուս գործերում<sup>27</sup>:

Ժողովրդական գրույցների հերոս Լիպարիտի անձի մասին, որն ապրել ու գործել է Կիլիկյան Հայաստանում, ստույգ տվյալներ չկան, սակայն աներկբա է նրա՝ պատմական անձ լինելը. Ն. Ակինյանն ուղղակի ասում է՝ «Պատմական դեմք մըն է Լիպարիտ»<sup>28</sup>: Համաձայն եղած տեղեկությունների և տարբեր կարծիքների, թերևս, կարելի է ենթադրել, որ Օրբեյյան տոհմի շառավիղ է<sup>29</sup> կամ, ըստ Ս. Երեմյանի, Լիպարիտյանների տոհմի: Այլշանը «Հայապատումում» Օրբեյյանի Պատմությունից բերում է Լիպարիտին վերաբերող հատվածը և ծանոթագրություններից մեկում շեշտում, որ Լիպարիտը «իշխան Ափխազաց, բայց ոչ Ափխազ»<sup>30</sup>:

Հովհաննես Թյկուրանցու անունով մեզ հասած «Տաղ քաջի Լիպարտին»<sup>31</sup> քերթվածը պատմական գրույցի գեղարվեստական մշակումն է<sup>32</sup>, և բովանդակային չնչին տարբերություններն էական չեն, ուստի զուգահեռներ անցկացնենք երկու Լիպարիտների մասին պատմող գրույցների միջև: Նախ, հարկ է ներկայացնել առաջին խմբի (մատենագիրների գրառած) գրույցների պատմական հենքը. «Արդ, ի թուակառութեանն հայոց 498» (էջ 273) սելջուկ-թուրքերի առաջխաղացումը կասեցնելու համար Բասենի դաշտում բյուզանդական, հայ և վրացական՝ Վասպուրականի կուսակալ Ահարոն (Առոն) Բուլղարի, Անիի կատապան Կատակալոն Կեկավմենոսի (Կոմնենոս, Կամենաս), Հյուսիսային Միջագետքի կառավարիչ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու, վրաց իշխան Լիպարիտի գլխավորած համատեղ ուժերը ճակատամարտ են տալիս՝ «ի բերդն՝ որ կոչի Կապուտոռու, ի տեղին՝ որ Արջովիտ ասի»<sup>33</sup>: Բյուզանդացիների նահանջի պատճառով սելջուկները հաղթում են ու շարունակում իրենց արշավանքը<sup>34</sup>: Առավել ծավալուն է Օրբեյյանի պատմածը. Լաստիվերցին և Ուռհայեցին համեմատաբար սեղմ են ներկայացնում եղելությունը: Վերջին երկուսի մոտ Լիպարիտը վրաց իշխան է, Օրբեյյանի մոտ հայ՝ Օրբեյյանների նախահայրերից, բայց էլի Վրաստանում ապրող: Այստեղ վրացի ասելով ի նկատի է առնվում դավանանքը, ոչ թե ազգային պատկանելությունը<sup>35</sup>: Երկրորդ խմբի (ժողովրդական) գրույցներում պատմական հիմքը Կիլիկյան հայկական պետության անկման ժամանակաշրջանն է՝ եգիպտական մամլուկների

<sup>26</sup> Հայապատում, Բ, էջ 539-540, ծնթ. 15:

<sup>27</sup> Տե՛ս Դ. Ա լ ի շ ա ն. Միսուան և Լևոն մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 226, 542, Յուշիկը հայրենեաց Հայոց ի հ. Ղևոնդէ մ. Այլշան, հատոր երկրորդ, Վենետիկ, 1921, էջ 445:

<sup>28</sup> Ն. Ա կ ի ն յ ա ն. Քաջն Լիպարիտ պատմութեան, տաղերու և գրույցներու մեջ. «Հանդես ամսօրյա», 1933, № 1-2, էջ 129:

<sup>29</sup> Այս մասին տե՛ս Ա. Մ ր ա պ յ ա ն. Հայ միջնադարյան գրույցներ, էջ 93-98:

<sup>30</sup> Հայապատում, Բ, էջ 321:

<sup>31</sup> Հ ն վ հ ա ն ն է ս Թ լ կ ու ր ա ն ց ի. Տաղեր, էջ 197-204:

<sup>32</sup> Տե՛ս Ն. Ա կ ի ն յ ա ն. Քաջն Լիպարիտ պատմութեան, տաղերու և գրույցներու մեջ, էջ 129-138:

<sup>33</sup> Մ ա տ թ է ո ս Ու ռ հ ա յ է ց ի. Ժամանակագրութիւն, էջ 107:

<sup>34</sup> Տե՛ս Հ. Մ ա ն ա ն ղ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 43-44, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, 449:

<sup>35</sup> Տե՛ս Մ ա տ թ է ո ս Ու ռ հ ա յ է ց ի. Ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1973, էջ 322, ծնթ. 193:

հարձակումները. մասնավորապես 1368 թ. Մանչուկ (Մանճակ, Մաճակ) էմիրի կողմից Սսի՝ մի քանի տարի տևած պաշարումն ու պաշտպանական կռիվները: Օրբեյանի ու Լաստիվերցու մոտ բյուզանդացիները, հասկանալով, որ իրենք միայնակ չեն կարող դիմագրավել սելջուկներին, Լիպարիտին խնդրում են դուրս գալ իսմայելցիների դեմ. «եկն Լիպարիտն բազում աղաչանօք և գանձուց առատատուր պարզևօք»<sup>36</sup>: Ուռհայեցու ժամանակագրությունում խնդրողը Լիպարիտի քրոջ որդին է՝ Չորտվանել իշխանը<sup>37</sup>: Զրույցում թագավորը պարզապես հրամայելու նման դիմում է. «Քեզի համար եկեր է հեծելս»<sup>38</sup>: Այսինքն՝ բոլոր դեպքերում Լիպարիտ իշխանին կանչել, խնդրել, հրամայել են կովին մասնակցել. սա ընդհանուր առաջին գիծն է: Հաջորդ ընդհանուր գիծը, որ առկա է գրույցներում, անօրինակ հերոսությունն է, որ դրսևորում է գորավարը՝ փոքրաթիվ զորքով էլնելով թշնամու դեմ, և զորքին գոտեպնդելը: Զրույցներում նույնն է նաև կովի ելքը. հաղթում են սելջուկները, մամուլները՝ հակառակ կողմի անմիաբանության պատճառով. հոռմեական զորքը՝ Ահարոն Բուլղարի գլխավորությամբ «փախան, զի մի առցե գանուն քաջութեան»<sup>39</sup>: Պատմիչները հստակ ասում են, որ Լիպարիտ իշխանի ձիու ջլերը կտրում են վրացիները<sup>40</sup>, և գորավարին գետին գցում. «իսկ անիծեալ և տիրասպան ազատն Վրաց երկուցեալ ահագին զաւրութենէ նորայ. եւ խորհուրդ առեալ ընդ դէղէպուլ զաւրագուխան Լիպարտի. և յանկարծակի հասին զջիլ երիվարին նորա. եւ ընկեցին յերկիր զԼիպարիտն» (էջ 276): Ուռհայեցու, Լաստիվերցու, ինչպես նաև Վարդան Արևելցու մոտ գերի տարված Լիպարիտին Տուղրիլ սուլթանը նվերներով ու պատիվներով ազատ է արձակում: Խիստ հետաքրքիր է Վարդան Արևելցու վկայությունն այս մասին. «Ասէ սուլտանն. Զի նչ կամիս. և նա (Լիպարիտը – Ն. Թ.) ասէ. Եթէ վաճառական ես, ծախեա՛ զիս, և եթէ դահիճ՝ սպա՛ն զիս. իսկ եթէ թագաւոր ես, պարզևօք ազատեա՛ զիս: Եւ ասէ սուլտանն. Ոչ գնոյ քո վաճառական, և ոչ արեան դահիճ կամիս լինել, այլ թագաւոր եմ, ե՛րթ ուր և կամիս. և արձակեաց զնա պարզևօք»<sup>41</sup>: Օրբեյանի Պատմության մեջ ևս նույն կերպ է ավարտվում ճակատամարտը, սակայն զոհվում է իշխան Լիպարիտը: Ժողովրդական գրույցում մի փոքր այլ է. թագավորը, որ մշտապես մտավախություն ունէր, թե հաջողակ զորավարը կարող է իրեն սպանել ու ինքը թագավորել, զորքն առած հեռանում է. Լիպարիտն էլ, սաստիկ վշտացած ու հուսահատ, ինքնակամ գնում է անխուսափելի մահվան՝ իջնելով երիվարից, նետելով սուրը, թույլ տալով իրեն սպանել: Բոլոր պատումներում նույնն է Լիպարիտի ձիուց իջնելու կամ զցելու պահը, առկա է նաև անմիաբանության փաստը: Հակառակորդն ընդունում և հարգում է զորականի մեծությունը: Ժողովրդական գրույցում էլ սուլթանը ցանկանում էր նման պատիվներ ցուցաբերել քաջին, եթե նրան արդեն գլխատած չլի-

<sup>36</sup> Պատմություն Արիստակիսի Լաստիվերցույ, էջ 81:

<sup>37</sup> Այս դեպքում նա միանգամից չի գնում, այլ միայն զարմիկի՝ Չորտվանելի մահվան լուրն առնելուց հետո «որպէս զգազան զայրացեալ էլաներ ի պատերազմ» (Մ ա տ թ է ո ս Ո լ ը հ ա յ ե ց ի. Ժամանակագրություն, էջ 107):

<sup>38</sup> Ա. Մ ր ա պ յ ա ն. Հայ միջնադարյան գրույցներ, էջ 238:

<sup>39</sup> Մ ա տ թ է ո ս Ո լ ը հ ա յ ե ց ի. Ժամանակագրություն, էջ 108:

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>41</sup> Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ, ՕԵ, էջ 99:



ներին. «թագաւոր անէի, ընդդէմ թշնամեաց իմոց կացուցանէի զնա՝ որպէս պարիսպ»<sup>42</sup>:

Այս ընդհանուր գծերից գաւտ կա նա մեկը. «Քաջ Լիպարիտ էր ի Սասնոյ գաւառէն, որ եկեալ բնակեր ի Կիլիկի»<sup>43</sup>, – այսպէս է սկսվում ժողովրդական գրույցը: Ըստ Մատթեոս Ուոհայեցու, Լիպարիտն ուներ քույր, որի որդին էր Սասունի Չորտվանէլ իշխանը՝ «գայրն հզօր և պատերազմող»<sup>44</sup>, ծագումով Տայքի Մամիկոնյաններից: Ինչպէս արդէն ասվեց, գրույց կա Լիպարիտի քրոջ մասին նա: Այս պարագան նույնպէս խոսում է գրույցների ընդհանուր ակունք ունենալու մասին:

Չրույցներում նույնիսկ բացի սյուժետային ընդհանրություններից, որն արդէն տեսանք, կան նաև ոճական նմանություններ: Լաստիվերցու պատմած գրույցը համատու է ժողովրդականը՝ առավել ընդհանուր, իսկ Օրբէյյանինը՝ մանրամասն ու կոնկրետ: Երկու դեպքում էլ առաձևահատուկ դրսևորվում է Լիպարիտների քաջությունը. նրանք միայնակ կարող են կռվել մեծաքանակ զորքի դեմ, միանման է ռազմադաշտում նրանց կռվի նկարագրությունը. «Եւ ինքն Լիպարիտ իբր զամբ հրախառն մտանէր և ելանէր և կայծակնահար առնէր, զբազումս և զօրէն հրոյ, ընդ եղեգն փոթորկեալ ճեղքէր զբոագմն նոցա և անցանէր յայն կողմն, և յաջ և յահեկ հոսէր գետս արեանց, և դնէր կուտս դիականց և հատանէր այլազգացն գունդս գունդս» (էջ 275): Ժողովրդական գրույցը պատմում է. «Եւ ինքն քաջ Լիպարիտն միայն ելանէր ի դէմ և կոտորէր զամենեսին և դիգեր զլաշն որպէս բլուր բլուր... զկռուողսն կոտորէր՝ որպէս զհուր եղեգն»<sup>45</sup>. կամ՝ «Փշէր, գոռայր իբր զառիծ» (էջ 275) և «դառնայր գոչելով որպէս զառիծ»<sup>46</sup>: Շատ նման են երկու գորավարների՝ մարտից առաջ ասված խոսքերն ու գործողությունները. «Ապա յանձն առեալ Լիպարիտն անվախ սրտի սսէ. «Ես երթամ ընդ յառաջ այլազգեացն և դնեմ զանձն իմ ի վերայ քրիստոսական հաւատոյս... կնքէր զինքն նշանաւ սուրբ խաչին և յանձն առնէր Քրիստոսի, և կապէր ի պարանոցն զմասն որ ի փրկական խաչէն» (էջ 274) և «Եւ նա ի լաց և ասէ. Իմ ջանքս վասն եկեղեցեաց է և քրիստոնէից... Եւ նոյն ժամայն եմուտ յեկեղեցին և լալով համբուրեաց զխրանն»<sup>47</sup>: Օրբէյյանը գեղեցիկ մանրամասներով նկարագրում է հերոսի սպառազինությունը. «... հեծեալ ի տաճիկ երիվարն՝ ընկենոյր զոսկենկար վահանն ի թիկունսն և զճաւճ նիզակին յահեակ բազուկն, և զլայն պողովատիկ շմշիրն երկբերանի ի յաջ ձեռին, և զվաղրն ահագին ի ներքոյ բարձիցն իբր զուռն դարբնաց և կամ զսակր կտցաւոր քարագալով յայսկոյս և յայնկոյս: Եւ յոսկեհուռ զրահէն և ի սաղաւարտէն նշոյլք հատանէին իբր զարեգականէ» (էջ 274-275), նման նկարագրություն առկա է արդէն Հովհաննէս Թլկուրանցու տաղում.

Էջ և թամբեց զհիւր ձին վազան,

<sup>42</sup> Ա. Ս ր ա պ յ ա ն. Հայ միջնադարյան գրույցներ, էջ 240:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 238:

<sup>44</sup> Մ ա տ թ է ո ս Ո լ ո հ ա յ ե ց ի. Ժամանակագրութիւն, էջ 107:

<sup>45</sup> Ա. Ս ր ա պ յ ա ն. Հայ միջնադարյան գրույցներ, էջ 239, 240:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 240:

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 239: Հավանաբար ժողովրդական գրույցը ևս վերամշակման է ենթարկվել հոգևորական անձի կողմից:

Հագաւ գրէհ 'ի ի վերայ ճօճան,  
Բ գլուխ եղիր յաղթող վահան,  
Ի ձեռն էառ գրոռում ճօճան<sup>48</sup>:

Այսպիսով, կարելի է, թերևս, հետևեցնել, որ եթե նույնիսկ Լիպարիտների մասին զրույցները (պատմիչների և ժողովրդական) ստեղծված չեն նույն միջավայրում, ապա մեկը մյուսի ազդեցությունն անպայման կրում է: Վերոնշյալ պատմություններում առկա զրույցները, անկասկած, ժողովրդական ակունքներ ունեն, որոնք այս կամ այն չափով ձևափոխվելով, կրճատվելով կամ հավելվելով գրի են առնվել, սակայն մի ճյուղով էլ շարունակել են բանավոր պատմվել: Կիլիկեցի գորավարի անվան նույնությունը Արևելյան Հայաստանի գորավարի անվան հետ առիթ է տվել նախորդ զրույցի նմանությամբ նորի ստեղծման:

Ստեփանոս Օրբեյան պատմիչն ունի հերոսներ, մասնավորապես գինվորական գործիչներ, որոնց նկատմամբ առանձնահատուկ սիրո զրույցներում է նկատվում: Դրանցից են Լիպարիտ Օրբեյանը և Բարիկ Մյունին: Այս կերպարները նման են միմյանց: Օրինակ՝ գրեթե միանման են նաև նրանց արտաքին տեսքը մարտից առաջ: Երկու հերոսներն էլ անվարան կարող են մենամարտել հակառակորդ գործի ներկայացուցչի հետ (Ուռհայեցին խոսում է հզոր խափշիկի և Լիպարիտի մենամարտի մասին, որը տեղի է ունեցել, երբ վերջինս սուլթանի մոտ գերի էր<sup>49</sup>), ռազմադաշտում միանման հզոր են, քաջարի, որոնց միայն անունն արդեն հակառակորդին շատ բան կարող է ասել, աստվածավախ են, հայրենասեր: Տվյալ պարագայում հայրենիքը և հավատը նույնանում են, եթե իհարկե հավատն առաջնային տեղում չի դիտվում: Օրբեյան գեղագետ պատմիչը կարողանում է ստեղծել վառ ու հետաքրքիր կերպարներ:

Նման հավատավոր անհատի մասին է պատմվում հերթական մի զրույցում: Պատմիչը հատուկ ոգևորվածությամբ ու երկյուղածությամբ է ներկայացնում Շահանդուխտ արքայադստեր հետ կապված միջադեպը, որն ինքնին հրաշք է: Աղվանքի գահերեց իշխան Վարազ Տրդատն<sup>50</sup> ուներ աննկարագրելի գեղեցկության տեր դուստր. «գեղ նորա յոյժ չքնաղ զարմացուցիչ տեսողաց, որ և ոչ ում էք նիւթեղէն կարծիր, այլ իբր ի լուսատարր օդոյ և յանօսը շողից կերպացեալ» (էջ 119): Օրբեյանը մեջբերում է Շահանդուխտի նամակը, որում պատմում է, թե ինչպես է ինքը Թորգոմյան տուն հարս գնալու ճանապարհին հարձակման ենթարկվում պարսիկներից, որոնք կոտորելով ուղեկցող գործին, փորձում են փախցնել գեղեցկուհուն, սակայն վերջինս իրեն նետում է ժայռից. «Եւ ահագին շնչմանէ հողմոյ և աներևոյթ զօրութեամբ իջի իբր կառօք ի խորութիւն ձորոյս ես և երիվարն իմ անվնաս» (էջ 120)<sup>51</sup>: Աստծո գորութեամբ փրկված օրիորդն անձր նվիրում է Աստ-

<sup>48</sup> Հ ն վ հ ա ն ն ե ս թ լ կ ու ր ա ն ց ի. Տաղեր, էջ 201:

<sup>49</sup> Մ ա տ թ է ո ս Ու ո հ ա յ ե ց ի. Ժամանակագրություն, էջ 108:

<sup>50</sup> Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց անձնանունների բառարան, հ. 5, Երևան, 1962, էջ 69:

<sup>51</sup> Ղ. Ալիշանն այս զրույցը ևս մեջբերել է և Մյունիքին նվիրված իր աշխատանքում (տե՛ս Միսական. տեղագրություն Միւսեաց աշխարհի, ի հ. Ղևոնդեայ մ. Ալիշան, Վենետիկ, 1893, էջ 252-253) և «Հայապատումում»: Վերջինում՝ ծանոթագրություններից մեկում, գրում է. «Դժվար է

ծուն, երդվում այդտեղից երբեք դուրս չգալ, մատուռ է կառուցում, ունեցվածքը տալիս եկեղեցուն և, իր շուրջը հավաքած կույսերի հետ, մեծամեծ ճգնությամբ ապրելով 30 տարի, վախճանվում է: Վիպական գույներով ներկայացված այս գրույցի նպատակը ևս նույնն է, ինչ նախորդներինը. ճշմարիտ հավատ առ Քրիստոս, անձնագոռնություն հանուն նրա: Ինչպես հայտնի է, գրույցներն ունեն պատմական հենք: Մեր պատմիչը, նաև Մովսես Կաղանկատվացին, Վարդան Բարձրբերդցին մյուսներից համեմատաբար մանրամասն են պատմում Բաբան կոչված պարսիկի մասին, որին Սյունյաց Վասակ իշխանը Հայաստան է բերում, որպեսզի նրա միջոցով կարողանա դիմագրավել Ավարանշահի ասպատակություններին<sup>52</sup>: Մակայն շուտով Բաբանը կամ Բաբեկը, կասեցնելով արաբական ոտնձգությունները<sup>53</sup>, սկսում է իրենը՝ թալանելով, ավերելով շրջակա բնակավայրերը. միայն Գեղարքունիքում սրածել էր 15 000 հոգու, քանդել ու այրել Մաքենոցաց ծաղկուն մենաստանը և այլն (էջ 116): Արաբ պատմիչ Իբն Ալ-Ասիրը նրա մասին ասում է.

հաւատալ՝ թէ այսպիսի վայելուչ լեզուով շարադրած ըլլայ. բայց իր ձեռք գրածն՝ գոր տեսեր է մեր ԺԳ դարու պատմիչն՝ անհաւանական չէ» (Հայապատում, Բ, էջ 239):

<sup>52</sup> Այստեղ Օրբելյանը, Սևադա Ավարանշահին կոչում է Մրվան. շփոթում է նաև ժամանակը՝ մեկ դար առաջ ներկայացնելով վերջինիս հետ կապված իրադարձությունները: Մակայն դեպքերի հերթագայումը համընկնում է Կաղանկատվացու նկարագրություններին, ինչից ակնհայտ է, որ վերջինիս երկից է օգտվել: Օրբելյանի երկում կարդում ենք. «Ի լնուլ 176 թուականին հայոց (ամ տեառն 727) ելանէ անիծեալ և աշխարհաւերն Մրվան բազում զօրօք տաճկաց ի Հայս, և իբրն հուր սաստիկ այրէ և հրդեհէ զգեղեցկութիւն աշխարհիս, որոյ անուն Աւարանշահ ճանաչիր: Եւ բազում աւարաւ եկեալ ի Սիւնիս՝ ամրանայ ի բերդագիւղն Շաղատայ և կամեր ապականել զայն ևս զգեղեցիկ աշխարհն Սիւսական, և կուտել զօրս ի գաւառ Ծղկաց՝ ի նմին տեղոց: Ապա Վասակ՝ Սիւնեաց տէր և իշխանաց իշխեցող գնայ փութանակի և ածէ զԲաբան պարսիկ բազում զօրօք յԱտրպատականէ: Եւ եհար զՄրվան սաստկապէս և փախստական արար. բայց ինքն Վասակ ի նմին ամի վախճանի: Եւ նոյնժամայն առնու Բաբան գորուստր նորա ի կնութիւն իւր և առնէր ընդ ձեռամբ իւրով գաւառն...» (էջ 115): Իսկ Մովսես Կաղանկատվացին գրում է. «Եւ ի նոյն ամի (821 թ. – Ն. Թ.) ասպատակեաց Սևադայ աշխարհաւերն տաճիկ, որ Աւարանշահ անուն ճանաչէր, ի սահմանս Հայոց. և յաւարի առեալ զաշխարհս ամենայն՝ դառնայ ի Սիւնիս, և ամրանայ բերդատեղի աւանին Շաղատու, որ է ի գաւառին Ծղկաց: Եւ Վասակ Սիւնեաց տէր ածեալ զԲաբան ի Պարսից՝ եհար գնոսս և արար փախստականս. և Սիւնեաց տէրն ի նմին ամի վախճանեցաւ. և նոյնժամայն էառ Բաբան գորուստրն Վասակայ Սիւնեաց ի կնութիւն...» (Կ ա դ ա ն կ ա տ ու ա ղ ի, էջ 326): Վարդան Արևելցին նշում է. «Յաւուրս յայտոսիկ յայր մի յազգէն Պարսից ելեալ ի Բաղդատայ՝ Բաբանուն, արկանէր զբազումս ի սուր սուսերի յազգէն Բամայեյի՝ գերելով զբազումս, և ասէր զինքն անմահ և ի միում նուագի սատակէր երեսուն հազար ի պատերազմելն իւրում ընդ Բամայեյի: Եւ եկն մինչև Գեղարքունի և մաշէր սրով զմեծ և զփոքր: Եւ Մամուն էր ի կողման Յունաց զամս եօթն և յառնուր զանհպելի ամուրն Լուլուայ և դառնայր ի Միջագետս:–Եւ Մեռաւ Մամուն և առ զիշխանութիւնն Ապուսահակ եղբայր նորա, որ և առաքէ զԱփշին ամենայն ուժով ի վերայ Բաբանայ ի Հայս և ինքն կոտորէ զօրսն Բաբանայ: Սահլ որդի Սմբատայ ըմբռնէ զԲաբան և առնու յԱփշնէն պարզևս հազարիցս հազար կշիռ արծաթոյ և այլ ևս հարիւր հազար առնու ի նմանէ. և զԲաբանայ կտրեալ զոտս և զձեռս հանէ գնա ի փայտ» (Մեծին Վարդանայ Բարձրբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա, 1861, էջ 108-109): Տե՛ս նաև Հ. Ք յ ու ը յ ա ն. Բաբակ և Սահլ իպն Սմբատ (էջ մը մեր իններորդ դարու պատմութենէն).– «Բազմավեպ», 1958, հունվար-փետրվար, էջ 9-22, մարտ-մայիս, էջ 72-82, հունիս-հուլիս, էջ 133-139:

<sup>53</sup> IX դարասկզբի արաբական արշավանքների մասին տե՛ս Ա. Տ է ր-Ղ և ո ն դ յ ա ն. Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965 էջ 66-95, Հ. Մ վ ա զ յ ա ն. Իրադրությունն Արցախում IX դարի առաջին կեսին. հայերի դիմադրական կռիվները.–ՊԲՀ-ի սույն համարի էջ 209-223:

«Բանն այն է, որ Բաբելը հենց իմանում էր, թե [պատրիկներից] որևէ մեկը գեղեցիկ կին ունի, պահանջում էր: Եթե ուղարկեին նրան [գործը դրանով վերջանում էր], ապա թե ոչ, լույսը չբացված գնում էր, խլում նրան (կնոջը) և կողոպտում ունեցվածքն ու վերադառնում»<sup>54</sup>: Դեպքերը տեղի են ունենում IX դարի սկզբներին, երբ Աղվանից իշխանն էր Ստեփանոսի որդի Վարազ Տրդատը, որին որդու՝ Ստեփաննոսի հետ 821-ին «Ներսես ի Փիլիպեան՝ ազգակիցն իւրեանց սպան ի միում ժամու ի Խորածորն, որ կոչի Դադոյի վանք»<sup>55</sup>: Ըստ Կաղանկատվացու՝ սպանվածի կինը դատերը՝ Սպրամին, փախցնում է Խաչենի բերդը, ապա ամուսնացնում Սյունյաց իշխան Սահլի որդու՝ Ատրնեսուեհի հետ: Կան երկու պատմություն. մի դեպքում մահից փրկված աղջիկն ամուսնանում է իշխանի հետ, մյուսում իշխանի հետ ամուսնանալու գնացող աղջիկը փրկվում է մահից, որից հետո իրեն է նվիրում Աստծուն: Կաղանկատվացին Վարազ Տրդատի երկու զավակի անուն է տալիս՝ Ստեփաննոս և Սպրամ, իսկ Օրբելյանը խոսում է միայն Շահանդուխտի մասին: Դժվար է ենթադրել, թե սրանք միևնույն անձն են, որի մասին պատմությունները ճյուղավորվել ու այլազան կերպարանք են առել՝ մանավանդ նկատի ունենալով Շահանդուխտ արքայադստեր նամակի հետևյալ տողերը. «Թէպէտ թախանձեցայ ի ծնողաց իմ և ի հարսնածու իշխանացն՝ ոչ շարժեցայ ի տեղուոյս» (ընդգծումը մերն է – Ն. Թ., էջ 120): Եթե նկատի ունենանք, որ Սպրամն արդեն մի ծնող ունեւր, կարելի է ենթադրել, որ այս երկուսը քույրեր էին, ընդ որում, Շահանդուխտն ավագն էր, որն ավելի վաղ պիտի ամուսնանար, երբ դեռ ողջ էր հայրը՝ Վարազ Տրդատը: Սյունյաց պատմիչն իր տեղեկությունները բերում է Շահանդուխտ արքայադստեր նամակից, եթե իհարկե նամակն իրոք գոյություն է ունեցել և գեղարվեստական հնարք չէ՝ խոսքը համոզիչ ներկայացնելու համար: Չի բացառվում նաև մեկ այլ տարբերակ. այս երկու պատմությունների հերոսուհիները նույն անձն են, պարզապես, քանի որ առաջինի դեպքում հարձակվողը և հորն ու որդուն սպանողը Սյունյաց տոհմից էր, Սյունիքում մոռացության են տվել իրականում տեղի ունեցածն ու ստեղծել մեկ այլը՝ թույլ չտալով, որ ճշմարտությունը խաթարի գեղեցիկ պատմությունը: Այնուամենայնիվ, Սյունիքի պատմության մեջ պահպանված գեղեցիկ գրույցը երկար է ապրել ու ապրում, ներկայացել նաև ավանդության տեսքով՝ մեկնաբանություն տալով Շահանդուխտի քերթին<sup>56</sup>: Ամեն դեպքում հստակ է ժամանակը՝ IX դարի սկիզբ: Համաձայն վերոբերյալ տեղեկությունների, թերևս, կարելի է ենթադրել, որ Աղվանից Վարազ Տրդատ իշխանի Շահանդուխտ դստերն առևանգելու փորձը կատարել է հենց Բաբանը. արաբական լծի տակ գտնվող Հայաստանում զինված պարսիկները, որ հարձակվել են գեղեցկուհու և նրան ուղեկցողների վրա, եղել են նրա մարդիկ և գործել են վերջինիս հրամանով:

Այս գրույցը ունի հոգևոր-վարքագրական երանգներ: Ինչպես գրույցները հստակ ժանրային սահմաններ չունեն, այնպես էլ ներժանրային սկզբունքները

<sup>54</sup> Իրն Ալ-Ասիր.– Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, Երևան, 1981, էջ 143:

<sup>55</sup> Կ ա դ ա ն կ ա տ ու ռ ի, էջ 340, տե՛ս նաև էջ 326:

<sup>56</sup> Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում, Երևան, 1969, էջ 13:

հստակ չեն, և դա բացատրելի է: Որպես բանավոր ստեղծագործության նմուշ՝ գրույցն անընդհատ փոփոխության է ենթարկվում՝ պայմանավորված այն վերարտադրողներից: Չպետք է մոռանալ, որ ժամանակաշրջանը, երբ ձևավորվել են դրանք, ուներ գաղափարախոսական որոշակի ուղղվածություն:

Հոգևոր կոչվող գրույցները, բնականաբար, քրիստոնեության գաղափարախոսության արտահայտություններ են: Մրանցում կան կոնկրետ գործող անձինք՝ հիմնականում հոգևորականներ, որոնց շուրջն էլ հյուսված են դիպաշարերը: Նման գրույցներն ու գրուցատիպ մանրապատումները հետապնդում են հավատն անսասան պահելու, տարբեր կարգի գայթակղություններին չտրվելու նպատակը: Մրանց հասարակական հիմնավորվածության վկայություն է ժամանակի հրատապ խնդիրների արտացոլումը՝ գրույցը վերարտադրողի սեփական մեկնաբանություններով ու գնահատականով: Կան գրույցներ, որոնք լինելով հոգևոր իրենց ընդհանուր բնորոշմամբ, այնուամենայնիվ, ունեն աշխարհիկ տարրեր: «Պատմություն տանն Միսական» երկում առկա են բավական թվով հոգևոր-վարքաբանական տիպի գրույցներ: Դրանցից են, օրինակ, Շաղատի եկեղեցու երեց Տիրոտի, Գյուտի, Մխիթարի, Երիցակի մասին գրույցները: Այս հոգևորականներն առանձնանում են իրենց առաքինի վարքով, սքանչելագործ հավատով:

Ժամանակագրական սկզբունքը պահպանելու համար նախ հարկ է խոսել երանելի Տիրոտի մասին: Այնքան հզոր էր այս Տիրոտի հավատը, որ բավական էր իր սուրբ աջով խաչի նշան աներ գազանի դեմ, ու վերջինս թողնում էր ուլը կամ գառը և հանդարտ հեռանում: Իր գործությունը տարածվում էր նաև այլ կենդանիների վրա, ինչպես ասենք գորտերի, որոնց կարող էր հրամայել լռել, ապա վերսկսել կռիվը: Տիրոտը կարողանում էր կոնկրետ օրինակի միջոցով բացատրել մարդու հոգեվիճակը. սա ուսուցողական, առակատիպ գրույցի նմուշ է: Այսպես, երեկոյան տեսնում է մեկի օրանը հրդեհված, նետում է գավազանը կրակի մեջ, առավոտյան գավազանը հանում են կարմրած, բայց անվնաս. «Այսպես արինագոյն կսկծելով իբրև հրացեալ այրի սիրտ որայի տեառն, – մեկնաբանում է երանելին, ապա ավելացնում, – յաւիտենից անողորմ և անշեջ հրովն դատելոց են արարողը արկածից վնասուն այտորիկ» (էջ 31): Եվ մարդիկ բնավ չեն էլ կասկածում, որ կատարվելու է երանելի մարդու ասածը: Նա, որ կարող էր խիստ պատժել իրեն վնաս պատճառած մարդուն, չի անում դա, այլ միայն ցույց տալիս, որ կարող է անել՝ քրիստոնեական մարդասիրություն դրսևորելով ամենքի նկատմամբ. իր չար ծառային, որ գողություն էր արել իրենից, այնուամենայնիվ, վարձը տալիս, օրհնում ու ճանապարհում է, թեև նախօրոք վերջինիս ոտքերը կապ էր զցել կարճ ժամանակով:

Օրբեյանը պատմում է ևս մի պատմություն՝ կապված այս հոգևոր այրի հետ, երբ փորձության է ենթարկվում նրա հավատը. սատանան էջի կերպարանք առած նրան անցկացնում է ջրի միջով, ընթացքում խոսում հետը. «դարձեալ էջն առ նա՝ եջոյց փայլատակմամբ գերկաթի զկայոթիսն<sup>57</sup> իւր և ասէ. «քո այսպէս իշոյ կայոթիս

<sup>57</sup> Փարիզյան հրատարակությունում գրված է «պայոթիս»՝ պայտեր իմաստով. տե՛ս Պատմությունն նահանգին Միսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց, էջ 86: Նույնն է ասում և Ալիշանը. տե՛ս Հայապատում, Բ, էջ 121: Թեև ձեռագրերի մեծ մասում «կայոթիս» ձևն է:

տեսեալ էս». և նորա հանեալ ի թափուցն զփոքրիկ դանակիկն իւր՝ եցոյց և ասէ. «և քո այսպէս իշոյ մտրակ տեսեալ էս. զիս ընդ գետս ի բաց անցո, եթէ ոչ հարկանեմ և վիրավորեմ զքեզ». և անցուցեալ զտուրբն ընդ գետն՝ աներևոյթ եղև չարն սատանայ» (էջ 31-32): Ընդհանրապէս Տիրոտը կարողանում էր աղոթքի միջոցով դիվահարների և զանազան հիվանդների բուժել: Ինչպէս մյուս բոլոր սրբերի, նրա գերեզմանին այցելող շատ հիվանդներ էին բուժվում:

Տեր Երիցակի մասին զրույցը հիշեցնում է Ներսէս Մեծի մասին եղածը: Եվ՝ Ներսէսը, և՛ Երիցակը չէին ցանկանում ստանձնել հոգևոր պաշտոնները՝ Ներսէսը՝ կաթողիկոսի, Երիցակը՝ Սյունյաց եպիսկոպոսի: Երկուսին էլ պարտադրում են: Հայոց Մուշե կաթողիկոսի օրոք Սյունյաց նույնանուն Մուշե եպիսկոպոսը վախճանվել էր 36 տարի պաշտոնավարելուց հետո<sup>58</sup>, և քանի որ Սյունի իշխանը նույնպէս մեռել էր, նրա կինը՝ Սահակիան, խնդրում է Մուշե հայրապետին գալ ու մետրոպոլիտ ձեռնադրել պատվավոր մի մարդու (էջ 52): Օրբեյանը մանրամասն նկարագրում է կաթողիկոսի այցը, որը «տիրաբար խոնարհեալ գթալով ի հօտն իւր՝ ոչինչ վերջացաւ ի գալոյ. այլ պատրաստեալ հրամայեաց ըստ հայրապետական ճոխութեան զճանապարհն» (էջ 52-53): Մ. Օրմանյանն այս առիթով նկատում է. «Նկարագրութիւնը հետաքրքրական է ժամանակին սովորութիւնները ուսումնասիրելու համար»<sup>59</sup>: Եվ՝ Ներսէսի, և՛ Երիցակի դեպքում էլ ժողովուրդը միահամուռ պահանջում է միայն նրանց: Փախտոս Բուզանդը գրում է. «... առ հասարակ աստեանն զբողոք բարձեալ աղաղակէին՝ եթէ Ներսէս լիցի մեր հովիւ... Ոչ ոք լիցի մեր հովիւ՝ բաց ի դմանէ, եւ ոչ ոք նստի այլ յայնմ աթոռ՝ բայց դա»<sup>60</sup>: Մերոպ Վայոցձորեցին՝ Ներսէս Մեծի վարքագիրը, որը մեծապէս օգտվել է այս Պատմությունից, նույնն է ասում. «Իսկ ժողովրդեան առ հասարակ զՆերսէս խնդրէին, զի կարգեսցեն առաջնորդ Հայոց»<sup>61</sup>: Համանման երևոյթի ենք հանդիպում և Սիսական աշխարհում՝ մետրոպոլիտի ընտրության ժամանակ. երբ հայրապետը հրաման է տալիս բազմությանը իրենց համար առաջնորդ ընտրելու, «ամենայն բազմութիւն գաղաղակ բարձին ի մի բերան և ասեն. «խնդրեմք մեք տեսուչ հոգւոյ մերոյ զհայր Երիցակ, բաց ի նմանէ ոչ պիտի մեզ այլ ոք» (էջ 53-54): Ներսէսը ամենևին էլ հոգևորական չէր (զինվորական էր) և չէր ուզում իր կենսակերպը փոխել՝ մեծ պատասխանատվություն ստանձնելով, ինչին ինքն արժանի չէր՝ իր համոզմամբ: Երիցակը ապրել էր Բաղք գավառում՝ մի քարանձավում, ապա երկար ժամանակ անցկացրել տեր Գյուտի (որի մասին կիսուս ենք ստորև) վանքում, ապա Նոր Երուսաղեմ անունով եկեղեցի կառուցել նույն Գյուտի օժանդակությամբ: Նա ամենևին չէր պատրաստվում հոգևոր տեսչություն ստանձնել՝ գերա-

տե՛ս ՄՄ, ձեռ. № 1488, թ. 23ա, № 2698, թ. 24ա, № 5501, թ. 25բ, № 6271, թ. 35բ, № 6520, թ. 106ա, № 6546, թ. 21ա, № 7503, թ. 23ա և այլն:

<sup>58</sup> Այլիշանը ժամանակագրական անհամապատասխանություն է նկատում Օրբեյանի նշած Պարսից Գավատ արքայի գահակալության և Մուշեի կաթողիկոսության թվականների միջև. տե՛ս նաև Հայապատում, Բ, էջ 205:

<sup>59</sup> Մ. Օրմանյան. Ազգապատում, հ. Ա, Մ. Էջմիածին, 2001, հոդվ. 352, սյուն. 607:

<sup>60</sup> Փ ա լ տ ո ս Բ ո լ զ ա ն դ. Պատմություն Հայոց. – Մատենագիրք Հայոց, հ. Ա, Ե. դ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 312:

<sup>61</sup> Պատմություն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց հայրապետի, էջ 20:

դասելով ճգնակյաց վարքը՝ «առ յոյժ խոնարհութեան իւրում»<sup>62</sup> արժանի չհամարելով նման պատվի: Երիցակը, որն ուզում էր նույնիսկ պարանով պարսպից իջնել ու փախչել, համաձայնում է դառնալ Սյունյաց եպիսկոպոս, երբ ականատես է լինում հրաշքի, որն ընդունում է իբրև Աստծո կամքի արտահայտություն՝ ասելով. «Կամք տեսառն լինիցի, և ոչ իմս» (էջ 55): Իսկ հրաշքը սուրբ հոգու աղավնակերպ իջնելն էր նրա վրա, «Ապա երթեալ կաթողիկոսին առ հայրն Երիցակ ի սրահ նորա, լի ցասմամբ կնքեց նշանաւ խաչին և ասէ. «ընդէ՞ր այդպէս յամառեալ կաս, դն գոյ ի քեզ, սաստեցցէ Աստուած ի չարն և հալածեցցէ»: Յայնժամ ընդ բան սրբոյն էլ ծուխ թանձր իբր փոթորիկ հողմոյ և վերացաւ ի տանէն. և ապա եկեալ երամք սպիտակ աղաւնեաց իջին ի քիւս սրահին և մին ի նոցանէ սլացեալ եկն էջ ի վերայ կաթողիկոսին, և վերացեալ ի նմանէ էջ ի վերայ Երիցակայ՝ և շրջէր ի վերայ խոշոր քուսիթային, և նուազ ձայնիւ խօսէր մարդկօրէն. «արժան է, արժան է»: Իսկ բազմութիւնն տեսեալ զայն՝ մեծապէս գոչէին միաբան. –«արժան է, արժան է» (էջ 55): Աղավնու իջնելը հար և նման է Բուզանդի մոտ նկարագրված՝ Կեսարիայում Ներսէսի կաթողիկոս ձեռնադրվելիս կատարված իրադարձությանը. մինչև Եվսեբիոս արքեպիսկոպոսի կողմից ձեռնադրության արարողությունը սկսելը, որին մասնակցում էր նաև Բարսեղ Կեսարացին, «թռաւ աղաւնին ի սեղանոյն եւ հանգեաւ ի վերայ նորա (Բարսեղի – Ն. Թ.), եւ յամեան բազում ժամաւ: Իսկ իբրեւ եհաս ժամ՝ յորժամ կամեցան զՆերսէս ձեռնադրել, վերացաւ աղաւնին ի սրբոյն Բարսեղէ, եւ նստաւ ի վերայ զլիտոյն Ներսէսի: Իբրեւ այս սքանչելիք եւ նշանք յԱստուծոյ լինէին ի վերայ առնս այսորիկ կային առ հասարակ ամենայն ժողովուրդն զարմացեալք եւ մեծ արքեպիսկոպոսն Եւսեբի: Առ հասարակ աղաղակէին ի վերայ նորա, թէ Հաճոյ եղեր դու Աստուծոյ, և հոգի Աստուծոյ հանգեաւ ի վերայ քո. զի նմանութիւն եղեւ ամենասուրբ Հոգւոյն, որ ի վերայ Տեառն երեւեցաւ»<sup>63</sup>: Աղավնու իջնելը նախընտրելի անձի վրա կրոններում ընդունված կերպ է, նույնը կա և ժողովրդական մոտիվներում և խոր արմատներ ունի: Միաժամանակ խիստ տպավորիչ է: Այս համեմատություններից ակնհայտ է, որ Երիցակի «սքանչելի օժման» մասին գրույցը կրում է ավելի վաղ եղածների ազդեցությունը, եթե դրա վերափոխված ու հարմարեցված, առավել գունազարդված տարբերակը չէ: Այս հոգևորական այրի մասին պատմությունն այսքանով չի ավարտում Օրբելյանը: Նա բերում է ավանդաբար պատմվող մի գրույց, թե ինչպես է կախարդ կնոջ օգնությամբ Երուսաղեմից ակնթարթորեն հայտնվում իր հայրենի Երիցավանքում, որի համար միաբանների հետ թողություն է խնդրում Աստծուց, և Աստված իր

<sup>62</sup> Փ ա լ տ ո ս Բ ու զ ա ն դ. Պատմութիւն Հայոց, էջ 312:

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 314, տե՛ս նաև՝ Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց հայրապետի, էջ 27-28: Մ. Օրմանյանն այս առիթով գրում է. «Ներսէսի կաթողիկոսական ընտրութիւնը կատարուեցաւ 353-ին, մինչ Եւսեբիոս 362-ին յաջորդեց Դիանիոսի, որ ընտրուած էր 340-ին: Իսկ Բարսեղ Եւսեբիոսի ընտրութենէն ետքը քահանայական կամ երիցութեան ձեռնադրութիւնը ստացաւ նոր ձեռքով, եւ հետեւաբար 353-ին ոչ Եւսեբիոս արքեպիսկոպոս եւ ոչ Բարսեղ երեց կամ երիցապետ, եւ ոչ աղանիի թոհչին պետք կար Ներսէսի արժանաւորութիւնը հաստատելու: Աղանիին նախ Բարսեղի եւ ետքը Ներսէսի վրայ հանգչելուն պարագան ալ նշան է, յունական մեծամտութեան հիւսուածք լինելուն» (Մ. Օրմանյան. Ազգապատում, հ. Ա, հոդվ. 120, պուն. 186):

մարդասիրական էությունը ցույց է տալիս տեր Երիցակին հայտնված տեսիլի միջոցով, որով տեղեկացնում է, թե կատարել է խնդրանքը:

Երիցակ ճգնավոր եպիսկոպոսի մասին պատմող գլխից հետո Օրբելյանը դնում է՝ «Պատմութիւն համառօտ հօրն Գիւտայ և Քրիստոսասիրն, և շինութիւն վանացն, որ յեզերն Երասխայ»: Այս Գյուտի մասին հիշատակում է Սովսես Խորենացին<sup>64</sup>: Գողթան գավառի Շարիթա իշխանի թոռ Վասակը, Գյուտ անվանափոխյալ, տասը տարի ճգնում է Երասխի ափի մի ձորակում. ահա հենց այս ժամանակ Պարսից արքայազնը որս անելիս տեսնում է մի եղջերու՝ եղջուրների մեջտեղում լույս, որը նրան ուղեկցում է դեպի հայր Գյուտի կացարանն ու աներևույթ լինում: Եղջերուի հայտնվելու, ապա անսպասելի անհետանալու տեսարանի հանդիպում ենք մեկ այլ գրույցում ևս, որի մասին կիսուենք իր տեղում: Արքայազնը ականատես է լինում հետևյալ տեսարանին. սուրբը բուժում էր արջի թաթը: Նույնանման երևույթի հանդիպում ենք Բուզանդի մոտ՝ սուրբ Շաղիտան բուժում է առյուծի թաթը<sup>65</sup>: Արքայազնը, որի գալստյան մասին տեսիլի միջոցով արդեն տեղյակ էր հայր Գյուտը, քրիստոնեություն է ընդունում՝ Քրիստոսասեր վերանվանվելով:

Վայրի գազաններին հնազանդեցնելու պահը կա նաև Թանահատից վանքի ճգնավոր վանահայր Մխիթարի մասին գրույցում: Եթե վերոհիշյալ Շաղիտայի հետ մշտապես քսան առյուծ էին շրջում, և հաճախ մոտը գազաններ էին գալիս ու նշաններով հասկացնում, որ իրենց բուժի, ապա այս Մխիթարը գայլերին ոչխարի հոտի և տավարի նախրի պահապաններ էր կարգել, իսկ արջերն իրենց մեջքով բեռ էին կրում. ավելին. հաճախ նա գնում էր անտառ, ուր գազանները «որպէս զգայունք խնդրէին ի նմանէ աղօթս և ողորմութիւն ըստ իւրաքանչիւր պիտոյից» (էջ 117): Հայր Մխիթարի գերեզմանը հետագայում դառնում է սրբատեղի, ուր մեծամեծ հրաշքներ էին կատարվում: Զրույցը զարգացում է ապրել ու ավելի գեղարվեստական երանգ ստացել. նույնիսկ կենդանիներն են քրիստոնյա դառնում: Այստեղ պատկերավոր ներկայացվում է այն բաղձանքը, որ երբևէ բոլորը գալու են միասնական ու մեկ ճշմարիտ հավատի:

Ստ. Օրբելյանի Պատմության մեջ կան այսպես կոչված ստուգաբանական, բացատրական գրույցներ: Աշխարհագրական տեղանունները բացատրողներից է Վայոց ձորի մասին պատմողը. «Ապա յանկարծակի եհաս ի վերուստ պատուհաս Տեառն և կալաւ իսաւար շօշափելի զգաւառն ամենայն գաւուրս քառասուն՝ և շարժումն և դղրդումն սաստիկ. զի եռայր երկիրն ահեղ դողացմամբ յանդնողց և բարձրանայր մինչև ի վեր և անդէն իբր գալիս ծովու փլուզանիւր. լիրինք տապալէին, վէմք ի հիմանց քակտէին. տունք և ապարանք գեղեցիկք լինէին գերեզմանք բնակչաց. աղբիւրք խցէին, գետք կորնչէին, և ամենայն տեղի երերէր տատանմամբ, և ձայնք մարդկեղէն բարբառոյ լսելի լինէին ի ներքուստ յանդնողց և ի վերուստ յօդոց «վա յ ձոր, վա յ ձոր». և կենդանուոյն ընկղմեցան ոգիք իբրև 10 000, զորս գիտէին և ի թիւ արկին. և զանձանօթիցսն ոչ ոք գիտէր զհամարն, յաղագս որոյ կոչեցաւ անուն գաւառին Վայոց ձոր» (էջ 103-104): Նշանավոր բանասեր Ա. Ա. Արբահամյանը իրավացիորեն կարծում է, որ VIII դարի առաջին կեսին տեղի

<sup>64</sup> Մ ո վ ո է ո Խ ո ր է ն ա ց ի, Պատմութիւն Հայոց, էջ 340:

<sup>65</sup> Փ ա լ լ տ ո ս Բ ո լ զ ա ն դ, Պատմութիւն Հայոց, էջ 395:



ունեցած երկրաշարժի հետ չի կարելի կապել տեղանվան առաջացումը, քանզի Վայոց ձորը հիշատակվում է նաև ավելի հին հեղինակների աղբյուրներում (Մովսես Խորենացի, Եղիշե)<sup>66</sup> և նշում է, որ այն գալիս է հնդեվրոպական սաս արմատից՝ «արև» իմաստով<sup>67</sup>: Իսկ Կ. Շահնագարյանցն այն կապում է հնդկական Vayou քամու աստված-անվան հետ<sup>68</sup>:

Այս գրույցը Մտ. Օրբեյանը փոխառել է իր նախորդ մատենագիրներից<sup>69</sup> (որոնք էլ իրենց հերթին վերարտադրել են ժողովրդականը), դրել է Լ գլխի վերջում («Վասն տեառն Ստեփաննոսի Միւնեաց վարք և վախճան. և որ ինչ պատմի զնմանէ»): Երկրաշարժը անմիջական արձագանքն էր Ստեփանոս Մյունեցու (660/70–735) եղերական վախճանի<sup>70</sup>: Մտ. Օրբեյանը հնարավորինս մանրամասն պատկերում է մատենագիր, աստվածաբան, մեկնիչ, թարգմանիչ, քերական, երաժիշտ, բանաստեղծ Ստեփանոս Մյունեցու կյանքն ու գործունեությունը, եղերական մահը, որին համարում է վկա: Կիրակոս Գանձակեցին գրում է. «սպանեալ եղև ի պոռնիկ կանանց ի Մոզն գաւառի... Եւ ահա խաւար եղև ի վերուստ անտեսանելի կալաւ զՄոզանն սահման, և գաւուրս քառասուն շարժեցաւ վայրն, և խորասոյգ եղեալ ընկղմեցան կենդանւոյն ոգիք իբրև տասն հազար: Վասն այնորիկ Վայոց ձոր անուանեցաւ մինչև ցայսօր ժամանակի»<sup>71</sup>: Համաձայն Օրբեյանի՝ «երանելին Ստեփաննոս կացեալ յեպիկոպոսութիւն ամ մի, զոր ոմանք ութ ամ ասեն, շրջեր յամարայնի ի մէջ երկոտասան գաւառաց մեծավիճակ գաւազանի իւրոյ և քարոզէր զբանն ճշմարտութեան» (էջ 101): Հենց այս առաքելությամբ էլ նա գալիս է Մոզ ավան, որտեղ էլ սպանվում է մի անբարոյական կնոջ ձեռքով: Եպիկոպոսը Ավագ ակն կոչված աղբյուրի մոտ ցերեկվա տոթին քնած է լինում, երբ չար մտադրությամբ գալիս է կինն իր սիրելեանի հետ. սիրելեանը չի համարձակվում սպանել, քանզի «տեսանէր տեառն ննջեալ, և իբր զբոց ցոլանայր շունչն ի վեր և ճախր առեալ դառնայր անդրէն. և հրեշտակ մի կացեալ ի սնարսն հովանի ունէր նմա թևօքն» (էջ 102): Այս դէպքում գործ ունենք գրույցում առկա հրաշալի տեսիլային տարրի հետ:

<sup>66</sup> Տե՛ս Մ ո վ ու է ս Խ ո ռ է ն ա ց ի. Պատմութիւն Հայոց, էջ 358, Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղրատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 178:

<sup>67</sup> Տե՛ս Մ տ . Օ ռ բ է լ յ ա ն. Մյունիքի պատմություն, էջ 409-410, ծնթ.

<sup>68</sup> Տե՛ս Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց, հ. 1, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կ. վ. Շահնագարեանց, Փարիզ, 1859, էջ 333: Շահնագարյանցը հետաքրքիր տեսակետ է հայտնում սյունեցիների արմատների մասին՝ նրանց գերմանական՝ գոթական ծագում վերագրելով. տե՛ս նույն տեղում էջ 20-28:

<sup>69</sup> Տե՛ս, օրինակ, Կ ա դ ա ն կ ա տ ու ա ց ի, էջ 320-3022, Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ է ց ի. Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 74, Գ ա թ է գ ի ն ա թ ք. Հ ո վ ու է փ յ ա ն ց. Մխիթար Այրիվանեցի. Նորագյուտ արձանագրություն և երկեր, Երուսաղեմ, 1931, էջ 17-23:

<sup>70</sup> Ժողովրդական հետաքրքիր մի տարբերակ կա «Ավանդապատում» ժողովածուում: Այստեղ խոսք չկա երկրաշարժի մասին և չի նշվում եպիկոպոսի անունը: Տե՛ս Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 147, նաև էջ 447, ծնթ. 385:

<sup>71</sup> Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ է ց ի. Պատմություն Հայոց, էջ 74:

Տեղանվան հերթական մի բացատրության ենք հանդիպում երկի ԺԸ գլխում («Վասն վկայիցն որ կան ի հանգստի ի Վայոց ձոր գաւառի աստ և անդ, և վասն վկայիցն որ շինեցաւ ի գետամիջին Եղեգեաց և Մոզան») պատմվող մի գրույցում. Վարդանանց պատերազմից հետո պարսից զորքը 23 տարի դեռ շարունակում էր ասպատակել Հայաստանը. «Մուրն վաղակաւոր կայր մերկացեալ ի վերայ ամենայն հայ զինուորի, միայն խնդրէին բանիւ միով ուրանալ գՔրիստոս և գլուխ կորացուցանել արեգական, և թէ ոչ՝ մեռանել առ ժամայն» (էջ 49): Այս պատճառով էլ երկիրը լցվել էր նահատակներով, այդ թվում՝ և Սիսական աշխարհը: Ահա հայոց զորքից որոշ զինվորականներ Վայոց ձորով ուզում էին անցնել Արցախ, իսկ նրանց հալածում էր Աթաշխուդա պարսիկը: Կոտորելով հայերին՝ պարսիկները հասել էին Ոստինք և Արտաբույնք կոչված գյուղերի մոտի գետախառնման տեղից դեպի ձորաբերան: Կոտորածից հոգնած պարսիկները գյուղի<sup>72</sup> հրապարակում վրաններ են խփում գիշերելու համար: Ահա հենց այստեղ էլ զորքի դետքին՝ թերևս միակ մարդուն, որը քնած չէր, հայտնվում է հրաշալի տեսիլ՝ Աստվածածինը ողբում է նահատակների մահը: Կարկամած գիշերվա կատարվածից՝ պարսիկը յուրայիններին չի կարողանում հողաբաշխ խոսք ասել, բացի «Մայր անդայ», այդ պատճառով էլ տեղանքը կոչվում է Մարանդ: Իսկ պարսիկը սրբերի օգնությամբ քրիստոնեություն է ընդունում: Այս գրույցում ևս առկա է հրաշալի տեսիլային տարրը, ինչը հիշեցնում է Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի յոթերորդ եղանակում նկարագրված պատմությունը, համաձայն որի՝ բանտված հայ քահանաների մարմիններից արձակված լույսը նույն ազդեցություն է թողնում մոզպետի վրա, ինչ Մարանդի դետքի. նա թուլացած ու կիսամեռ հազիվ կարողանում է լքել բանտի երդիկը: Սրանից հետո մոզպետը նախ դահճապետի միջոցով, ապա անձամբ խոսում է սուրբ քահանաների հետ, հնարավորություն ստանում նրանց հետ աղոթելու: Հենց այս աղոթքի ժամանակ էլ նրան երևում է մեկ այլ տեսիլ, որում արդեն կային գործող անձինք և որը երիցս կրկնվում է. երկինք գնացող լուսեղեն սանդուղքով բարձրանում են հայոց նահատակ զինվորականները, որոնք ինք պսակ ունեին իրենց հետ:

Այս երկու գործերում ակնհայտ են գուգահեռներ: Երկու դեպքում էլ տեսիլի կենտրոնական կերպարները հայ նահատակ զինվորներն են՝ մի տարբերությամբ. եթե Վարդանանց պատերազմում զոհվածներն արդեն բարձրանում են երկինք և «էր ամենեցուն տեսլին նոր և չքնաղ և ահաւոր և սքանչելի իբրև զտեսիլ հրեշտակաց»<sup>73</sup>, և իրենք իրենց հերթին եկել են ուրիշների հետևից, ապա Մարանդի նահատակները նախորդ փուլում են, և Աստվածամայրը դեռ նրանց համար բարեխոսելու է իր որդու մոտ: Երկու տեսանդներն էլ պարսիկ են, և տեսիլը նրանց երևացել է գիշերը: Հրաշալի ու ահավոր երևումից հետո և՛ դետքը, և՛ մոզպետը ֆիզիկապես թուլանում են, ինչը հոգեկան մեծ ցնցման հետևանք է. դրանից հետո դառնում են քրիստոնյաներ: Մտ. Օրբեյանի Պատմության մեջ տեղ գտած գրույցը, ամենայն հավանականությամբ, ստեղծվել է հենց Եղիշեի նկարագրած պատմության ազդեցությամբ:

<sup>72</sup> Մտ. Օրբեյանը չի նշում, թե երկու գյուղերից կոնկրետ որ մեկում են գիշերում պարսիկները:

<sup>73</sup> Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, էջ 150:

Օրբեյյանի Պատմության տարբեր հատվածներ ընդօրինակվել են զանազան ժողովածուներում, ինչը երկի մեծ ժողովրդականության ապացույց է: Նման հատվածներից է Թանահատի մասին պատմողը: Այս գրույցը բավականին տարածված է եղել, ինչի մասին վկայում են ձեռագրերում առկա ընդօրինակությունները<sup>74</sup>: Ինչպես երևում է վերնագրից, «Վասն Թանահատի վանաց և հորն Մխիթարայ» (գլ. ԼԳ., էջ 116), գլուխը, բացի վանքի մասին գրույցից, պարունակում է այլ գրույց նա: Վանքի միաբանները, «հեռացեալք յամենայն փափուկ կերակրոց», սնվում էին միայն ցամաք հացով ու ջրով: Նույնիսկ Սյունյաց իշխանների ու եպիսկոպոսների հորդորներին ակնջալուր չէին լինում, որ գոնե կիրակի օրերին ճաշակեն յուղ, պանիր ու թան, միայն երբեմն բանջարեղեն ու ընդեղեն էին ուտում, իսկ ավելի հազվադեպ ձեթ էին օգտագործում «վասն որոյ Թանահատք կոչեցան» (էջ 117): Ստ. Օրբեյյանը խոսում է Միսական աշխարհում գործող նույնանուն երկու վանքերի մասին, որոնցից մեկը կոչվում է նաև Թանահատից, որը Վայոց ձորում է, և որտեղ թաղված է Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը: Այս վանքի անվանակոչության հիմքում էլ ընկած է նույն պատմությունը, ինչ նախորդինը, որ գտնվում է Ծղուկ գավառում: Միևյանցից տարբերելու համար պատմիչը վերջինիս մասին ասում է, «որ կայ ի վերոյ Միւնեաց ի ստորոտ լերինն ի բարձրավանդակի միոց անտառի» (էջ 116):

Լայն տարածում ունեցող ժողովրդական գրույցներից է բուսական խաչի մասին պատմողը, որի մի տարբերակն էլ առկա է Սյունաց պատմության մեջ: Մ. Արեղյանը առաջինն է գնահատել «Կարոս խաչ» կրոնական վիպական երգը, որի մասին գրում է. «Թե որքան հին է այդ երգը՝ կարելի չէ որոշել: Բայց դրա բովանդակության առաջին մասն իբրև անկախ կրոնական գրույց գտնում ենք արդեն Ստեփանոս Օրբեյյանի պատմության մեջ (XIII դարում): Նա Միսականի (այժմյան Միսիանի) վանքերի մեջ երրորդ տեղում դնում է Կնեվանքը<sup>75</sup> և դրա մասին բերում է հետևյալ գրույցը»<sup>76</sup>, որի համառոտ բովանդակությունն այս է. նախրապան մանուկները կնյունից (բուսական) խաչ են պատրաստում, երկրպագում ու երեք եզ խոստանում մատաղ անել, քահանան օրհնում է խաչը, իշխաններն այդտեղ եկեղեցի են կառուցել տալիս: Իսկ կնյունի տեղում մի փոքրիկ փոս են թողնում, որտեղից ձեթ էր բխում: Ասվածի վկայությունն էլ եկեղեցին, խաչն ու կնյունի տեղն են: Վանքն էլ կնյունե խաչի պատվին կոչվել է Կնեվանք: Այս նախնական գրույցն ընդարձակվել է՝ վերածվելով վիպերգի: «... Վիպերգը ծագում է միջնադարյան խաչի պատմություններից մեկից, որը պաշտոնական խմբագրամբ մեզ չի հասել»<sup>77</sup>: Ուշագրավ նկատում ունի բանագետ Ս. Հարությունյանը, որը նախ նշում է. «Կարոս խաչ» վիպական երգը հայ բանահյուսության հրատարակված ժառան-

<sup>74</sup> Տե՛ս, օրինակ, ՄՄ, ձեռ. № 784, ք. 376բ-379բ, № 1535, ք. 1բ-3բ և այլն:

<sup>75</sup> Ստ. Օրբեյյանն առաջինը համարում է Տաթևի վանքը, որին հաջորդում են Թանահատի, ապա՝ Սյունի վանքերը, իսկ Կնեվանքը, փաստորեն, չորրորդն է (էջ 248):

<sup>76</sup> Մ. Արեղյան, Երկեր, հ. Ա, էջ 502:

<sup>77</sup> Ա. Մահակյան. Կարոս խաչի պատմությունը. – Կարոս խաչ, ուսումնասիրություններ և բնագրեր, կազմեցին և խմբագրեցին Ս. Հարությունյանը և Ժ. Խաչատրյանը, Երևան, 2000, էջ 8:

գուրջան մեջ հայտնի է մի քանի տարբերակներով<sup>78</sup>: Ապա տարբեր փաստերի համադրումով գալիս է հետևյալ եզրակացության. «Պետք է ենթադրել, որ Դավթի Սուրբ Նշանի ավանդությունը XVI դ. կամ, ավելի հավանական է, հետագայում անցել է հարևան գավառները. փոքր-ինչ հեռացել է Դավթի Սուրբ Նշանի անունից և ժողովրդական երգիչների բերանին հարակցվել Ստ. Օրբեյանի պատմած հոտադների բույսից խաչ շինելու և այդ խաչը աստվածային զորությամբ օժտելու տարածված կրոնական ավանդությանը: Թեպետ Ստ. Օրբեյանի հաղորդած ավանդությունը XIII դ. կապված է եղել Սիսականի Կնեվանքի անվան ծագման հետ, բայց այն իր հին կրոնական բնույթով հավանաբար լայն տարածում է ունեցել Հայաստանի տարբեր մասերում և անգամ կապվել է նշանավոր անձանց հետ»<sup>79</sup>: Խաչը կամ փրկական խաչափայտի մասնիկը կարևոր դեր է կատարել միջնադարյան իրականության մեջ. Ստ. Օրբեյանն իր հերոսների հավատի ուժգնությունը շեշտելու համար հաճախ նշում է, որ նրանք ապավինում էին փրկական խաչի մասունքին: Լիպարիտը, ինչպես վերևում արդեն նշվել է, պարանոցին է կապում փրկական խաչից մի մասնիկ, կամ Մմբատ Օրբեյանը մոտեղով Մանկու խանի արքունիքում հյուրընկալվելու ընթացքում իր մոտ էր պահում նման մի մասունք, որը գիշերը լույս էր տալիս և դրանով շփոթեցնում այլադավաններին, ինչի շնորհիվ էլ վայելել է խանի բարյացակամությունը (էջ 300-301):

Կենսատու խաչափայտի մասին Օրբեյանը պատմում է մեկ այլ հրաշապատում գրույց ևս, թե ինչպես Արցախից բերած մասունքը, որը հարություն էր տվել մահացած երեխային, դառնում է Դլեն իշխանի (XI դ.) տոհմական սեփականությունը: Հետագայում իշխանի թոռներից Ստեփանոս մետրոպոլիտն այն գնում ու ընծայում է Նորավանքին՝ համապատասխան արձանագրությամբ (էջ 354-358)<sup>80</sup>:

Պատմության մեջ առկա մի շարք գրույցներ կամ դրանց որոշ հատվածներ երբեմն ձևափոխված շրջանառվել են որպես ավանդություններ, ինչը լայն ժողովրդականության խոսուն վկայություն է. այսպես՝ Նախկորգան բնակավայրի հիմնադրման, Եղնիկի բլրի մասին պատմությունները: Համաձայն ավանդության՝ Բարիկը «Եւ անցեալ ընդ Երասխ գետ» շինե գիւղաքաղաք մի՝ կոչելով զանուն տեղւոյն Նախկորգան, որ թարգմանի նախ զնա կորգեալ առ ինքն յիւր հայրե-

<sup>78</sup> Ս. Հ ա թ յ ո յ ն ւ ն յ ա ն. Կարոս խաչ վիպերգի մի միջնադարյան պատում. – ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, № 8, էջ 87:

<sup>79</sup> Նույն տեղում, էջ 91-92: Այստեղ Ս. Հարությունյանը ծանոթագրում է, որ «Կարոս խաչի մեկ այլ ավանդություն կապվել է Գ. Նարեկացու անվան ու հրաշագործության հետ»: Ըստ այդմ՝ կարոսից խաչը պատրաստում է գառնարած Գ. Նարեկացին. այնուհետև պատմվում է վիպերգի նույն սյուժեն, մի տարբերությամբ միայն, որ խաչը քահանայից հափշտակում է ոչ թե օտար բռնակալը, այլ գյուղի տանուտերը. խաչը տանուտերի տանը լույս չի տալիս և թռչում, մտնում է Գ. Նարեկացու աղթատեղի մոտ գտնվող հորը» (Ս. Հ ա թ յ ո յ ն ւ ն յ ա ն. Կարոս խաչ վիպերգի մի միջնադարյան պատում, էջ 92, ծնթ. 15):

<sup>80</sup> Է. Դանիելյանն իրավացիորեն նկատում է, որ այս գրույցը «հարստացնում է խաչափայտի մասին ավանդապատմի գանձարանը» (Է. Դ ա ն ի է լ յ ա ն. Գանձասարի պատմություն, Երևան, 2005, էջ 78)

նեացն» (էջ 27)<sup>81</sup>: Ավանդության մի տարբերակ է բերում Ա. Ղանալանյանը<sup>82</sup>: Այստեղ պարսիկ ասպատակիչների փոխարեն հանդես են գալիս արաբները, որոնք էլ Շադատի վանքից կողոպտված հարստությունն ու սրբությունները պահում են գաղտնի տեղում, վրան հող լցնելով դարձնում բլուր: Տաթևի վանքի կառուցման ընթացքում փնտրում են այս սրբությունները՝ նոր վայրում պահելու համար, չեն գտնում. միայն ժամանակ անց պատահամաբ պարզվում է գանձերի գտնվելու վայրը: Եթե պատմիչների մոտ Բաբիկ Սյունին է հետապնդում եղջերվին, որը փախչելով բարձանում է բլրի վրա, ապա ավանդությունը պարզապես ներկայացնում է, որ երկու որսորդ են եղել եղնիկին հետապնդելիս, ինչի շնորհիվ էլ հայտնաբերվել են և Տաթև տեղափոխվել հարստությունները: Այս վերջին պարագայում էականը Եղնիկի բլուր կոչվող վայրի անվան մեկնությունն է, մինչդեռ վերոհիշյալ երկու՝ Աղվանքի և Սյունիքի պատմություններում էլ այս հայտնության մասին խոսվում է երկյուղածությամբ ու ավելի մանրամասնորեն. Բաբիկի արագաքայլ ձիու ոտնատեղից անուշաբույր է տարածվում, իսկ հետապնդող եղջերուն անհետանում է: «Ահ կալալ գամենեսեան», – գրում է Կադանկատվացին<sup>83</sup>, Օրբելյանն ահին ավելացնում է զարմանքը ևս. «... սխրալի զարմանք յահի կալալ գամենայն բազմութիւնն» (էջ 28): Այստեղ ակնհայտ է, որ եղջերուն որսի սովորական կենդանի չէր. նա հատուկ նպատակով էր հայտնվել. պետք է ցույց տար գանձերի տեղը և իր առաքելությունն ավարտելուց հետո անհետանում է այնպես, ինչպես հայտնվել էր: Ինչպես արդեն տեսանք վերևում, նույնը կատարվեց Գյուտի մասին գրույցում. երկու դեպքում էլ ընտրված է եղջերուն՝ որպես ազնիվ կենդանի, երկու դեպքում էլ եղջերուն ուղեցույց է<sup>84</sup>: Գյուտի մասին գրույցում եղջերուն առավել ազդեցիկ դեր է կատարում իր խաչակերպ լույսով, որը լուսեղեն մարդու կերպարանքի է վերածվում. սա կատարվում է հեթանոս պարսիկի վրա ավելի զորեղ, ահարկու տպավորություն գործելու համար: Մինչդեռ Բաբիկը, որը քրիստոնյա էր, նման ուժեղ տպավորության կարիք չունեց: Երկու դեպքում էլ կենդանին, որ հայտնվել էր, բարի նպատակ ուներ, ի տարբերություն Տիրոտի մասին գրույցում եղածի. այստեղ սատանան էր անմեղ կենդանու՝ էջի կերպարանք առել և ուզում էր փորձել մարդու հավատը, սակայն սրամիտ ու աներեր հավատացյալը ինքն է սարսափեցնում չարին: Հաջորդ պատկերները, որ բերվում են Բաբիկի մասին գրույցում, հաստատում են հավատի գործությունը. այդ օրը (հողի ամսի մեկին. իմա՝ սեպտեմբերի տասին) կատարվում են հրաշքներ, հիվանդների բուժում և այլն, անհավատ երկու եղբայրներ՝ Գորը և Գազանը, ընդունում են քրիստոնեություն և մկրտվում, վերջինիս Սյունյաց տերը բաժին է տալիս հենց Շադատ գյուղաքաղաքը:

<sup>81</sup> Տե՛ս նաև Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 169: Մովսես Կադանկատվացին գրեթե բառացի նույնն է ասում, միայն տեղավայրի անունը նշում է Ակորգ, որը Նախկորգանի աղավաղված ձևն է. տե՛ս Գ ա դ ա ն կ ա տ ու ռ ի ա գ ի, էջ 111:

<sup>82</sup> Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 31: Ավանդությունը գրառել է Ս. Խանգաղյանը 1946 թ. Գորիսի Խոտ գյուղացի Հովհ. Մարտիրոսյանից (տե՛ս նույն տեղում, էջ 423):

<sup>83</sup> Գ ա դ ա ն կ ա տ ու ռ ի ա գ ի, էջ 111:

<sup>84</sup> Եղջերուին հետապնդելու մոտիվը ժողովրդական է և հին ակունքներ ունի. այս պարագայում այն հանդես է եկել ձևափոխված:

Զրույցներն իրենց բովանդակային առանձնահատկություններից զատ ունեն և կառուցվածքային յուրօրինակություններ (որոնք թեպետ ոչ միշտ են հստակ պահպանվում, և դա բացատրելի է). նախ մուտքային միավորներ՝ ասեն, թե, պատմեն և նման արտահայտություններ (քանի որ զրույցն ինքնին երկշերտ պատում է), ապա բուն զրույցը և ավարտը՝ հիմնականում լավատեսական, նույնիսկ երբ հերոսը կամ հերոսները վախճանվում են: Զրույցների կառուցվածքային յուրահատկություններից է հրաշապատում տարրի, տեսիլային դրվագի ներկայությունը: Վերոբերյալ գրեթե բոլոր զրույցներում առկա են տեսիլներ. կամ որպես կենտրոնական իրողություն, որի շուրջ հյուսվում է զրույցը (Մարանդի զրույցը), կամ որպես օժանդակ հնարք (Գյուտի զրույցը): Հոգևոր հայրերի մասին պատմող բոլոր զրույցներն ունեն հրաշապատում տարր կամ դրա մասին հպանցիկ հիշատակում:

Զրույցին հատուկ են պատմողական յուրատիպ ոճը, երբեմն նույնիսկ թատերականացված բնույթը, պատմողի գրեթե մշտական ներկայությունը և վերաբերմունքը: Այսպես Լիպարտի մասին զրույցի վերջում հեղինակը նշում է. «... բայց ես զսպանումն Լիպարտի համարիմ ոչ կորուստ անձին. այլ զհետ մեծի փրկութեան՝ զի եղեալ զանձն ի վերայ հաւատին Քրիստոսի՝ մեծապէս հանդիսացաւ և անպարտ սպանմամբն յիրոցն մարտիրոսական արեամբն պսակեցաւ և գնաց առ ամենաթագաւորն Քրիստոս զի ի նմանէ ընկալցի զվարձս և զպարգևս մեծավաստակ աշխատութեան իւրոյ» (էջ 276): Այստեղ գործ ունենք քրիստոնէական գաղափարախոսության տիպիկ օրինակի հետ: Պատմողն անպայմանորեն նկատի ունի լսողին, տվյալ դեպքում ընթերցողին. նա ոչ թե պարզապէս թղթին է հանձնում իր մտքերը, այլ հենց զրույցի է բռնվում նրա հետ՝ արդարացնելով զրույցի՝ որպէս նախապէս բանավոր խոսքի դրսևորում հանդես գալը:

Ստ. Օրբելյանը, մեր մյուս պատմիչների նման, հատուկ ուշադրություն է դարձրել շարադրանքի ձևին, աշխատել է զրույցներում պահպանել հասարակ, բայց ոչ պարզունակ ոճը, նրա խոսքի գեղեցկությունն ակնհայտ է նաև այս ժանրում:

## СКАЗЫ В “ИСТОРИИ СЮНИКА” СТ. ОРБЕЛЯНА

НАИРА ТАМАМЯН

### Резюме

Митрополит Сюника Степанос Орбелян (вторая половина XIII в. – 1303 г.) – автор историографических, художественных и богословских произведений. Его основной труд – “История Сюника” – один из крупнейших и важнейших памятников армянской историографии и литературы. Сказы занимают особое место в этом произведении как внутрижанровое проявление. Имея реальную основу, сказ передает событие художественным путем, чем и отличается от других жанров малой прозы. В Истории встречаются разные типы этого жанра: исторические (о Липарите), историко-эпические (об Андоке и Бабике), духовные (про священнослужителей) и т. д. Ст. Орбелян также использует сказ как метод повествования.

## THE TALES IN S. ORBELYAN'S "THE HISTORY OF SYUNIK"

*NAIRA TAMAMYAN*

## S u m m a r y

Metropolite of Syunik Stepanos Orbelyan (the second part of the 13th cent. – 1303) is the author of historiographical, art and theological works. His main work "The History of Syunik" is one of the greatest and most important memorials of the Armenian historiography and literature. The tales take special place in this work, they are intergenre displays. Tales have real basis and differ from other genres of little prose. There are various types of tales in the history: historical (about Liparit), historical-epic (about Andok and Babik), spiritual (about clerics), etc. Orbelyan uses the tale as a method of narration, too.